

3317

Պրոխորներ բարձր յերկրները, միացե՛ք

Ի. ՄՏԱԼԻՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ
ՅԵՎ ՌՈՒՍԱԿԱՆ
ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԻ ՏԱԿՏԻԿԱՆ

3K 33
7-75

Կ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹԵՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ ● 1 9 3 6



24 JUN 2005

Պրոկտորները ըստը յերկրորդի, միացե ը

3X33

Z-75

պր

14 NOV 2000

Թ. ՍՏԱԼԻՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ
ՅԵՎ ՌՈՒՍԱԿԱՆ
ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԻ ՏԱԿՏԻԿԱՆ



ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԸ

05.08.2013

3317

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ
ՅԵՎ ՌՈՒՍԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԻ ՏԱԿՏԻԿԱՆ

«Հոկտեմբերի ուղիներում» գրքի առաջաբանը



1450
38



И. СТАЛИН
ОКтябрьская РЕВОЛЮЦИЯ
И ТАКТИКА
РУССКИХ КОММУНИСТОВ



МЕЖДУНАРОДНЫЙ ХАРАКТЕР
ОКтябрьской РЕВОЛЮЦИИ

Армпартиздат, Ереван

I. ՀՈԿՏԵՄԲԵՐԹԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ
ՅԵՎ ՆԵՐՔԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Արտաքին կարգի յերեք հանգամանքներ վորոչեցին
այն համեմատական հեշտությունը, վորով պրոլետա-
րական հեղափոխությանը Ռուսաստանում հաջողվեց
փշրել իմպերիալիզմի շղթաները և, այդպիսով, տապա-
լել բուրժուազիայի իշխանությունը:

Նախ՝ այն հանգամանքը, վոր Հոկտեմբերյան հե-
ղափոխությունն սկսվեց յերկու հիմնական իմպերիա-
լիստական խմբերի՝ անգլո-ֆրանսական և ավստրո-
գերմանական խմբերի կատաղի կռվի ժամանակաշրջա-
նում, յերբ այդ խմբերը, դրադիւած լինելով իրար դեմ
մահացու կռիվ մղելով, վո՛չ ժամանակ ունեյին, վո՛չ
եւ միջոցներ՝ լուրջ ուշադրություն նվիրելու Հոկտեմ-
բերյան հեղափոխության դեմ պայքարելուն: Այս
հանգամանքը հսկայական նշանակություն ունեցավ
Հոկտեմբերյան հեղափոխության համար, վորովհետև
նա այդ հեղափոխությանը հնարավորություն տվեց
ոգտագործելու դաժան ընդհարումներն իմպերիալիզմի
ներսում՝ իր ուժերն ամրացնելու և կարճակերպելու
համար:

Յերկրորդ՝ այն հանգամանքը, վոր Հոկտեմբերյան
հեղափոխությունն սկսվեց իմպերիալիստական պատե-

րազմի ընթացքում, յերբ պատերազմից տանջված ու հաշտութեան ծարավի աշխատավոր մասսաներին իրերի բուն իսկ տրամաբանութեանը մոտեցրել եր պրոլետարական հեղափոխութեանը, վորպես պատերազմից դուրս դալու միակ յեղբի: Այս հանդամանքն ամենալուրջ նշանակութիւն ունեցալ Հոկտեմբերյան հեղափոխութեան համար, վորովհետև նրա ձեռքը հաշտութեան հուժկու գործիք տվեց, նրա համար հեշտացրեց խորհրդային հեղաշրջումն ատելի պատերազմի վախճանի հետ միացնելու հնարավորութիւնը և, դրա շնորհիւ, նրա համար ստեղծեց մասսայական համակրանք ինչպես Արևմուտքում՝ բանվորների մեջ, այնպես էլ Արևելքում՝ ճնշված ժողովուրդներին մեջ:

Յերրորդ՝ բանվորական հուժկու շարժման առկայութեանը Յեկոսպայում և հեղափոխական ճգնաժամի հասունանալու փաստն Արևմուտքում ու Արևելքում, ճգնաժամ, վոր ստեղծել եր իմպերիալիստական յերկարատև պատերազմը: Այս հանդամանքն անդնահատելի նշանակութիւն ունեցալ հեղափոխութեան համար Ռուսաստանում, վորովհետև նա Ռուսաստանից դուրս համատարիմ դաշնակիցներ ապահովեց հեղափոխութեան համար՝ համաշխարհային իմպերիալիզմի դեմ ուղղված նրա պայքարում:

Բայց, բացի արտաքին կարգի հանդամանքներից, Հոկտեմբերյան հեղափոխութեանն ուներ ելի մի ամբողջ շարք ներքին բարենպաստ պայմաններ, վորոնք հեշտացրին նրա համար հաղթութեանը:

Այդ պայմաններից գլխավորները պետք է համարել հետևյալները:

Նախ՝ Հոկտեմբերյան հեղափոխութեանն իր կող-

մում ուներ Ռուսաստանի բանվոր դասակարգի հակայական մեծամասնութեան ամենաակտիվ աջակցութեանը:

Յերկրորդ՝ նա վայելում եր անտարակուսելի աջակցութեանը գյուղացիական չքավորութեան ու զինվորների մեծամասնութեան, վորոնք ծարավի ելին հաշտութեան ու հողի:

Յերրորդ՝ նրա գլուխ եր անցած, վորպես ղեկավար ուժ, մի ախպիսի փորձված կուսակցութեան, ինչպիսին բոլշևիկների կուսակցութեանն է, վորն ուժեղ է վո՛չ միայն իր փորձով ու տարիներով մշակված կարգապահութեամբ, այլև աշխատավորական մասսաների հետ ունեցած ահագին կապերով:

Չորրորդ՝ Հոկտեմբերյան հեղափոխութեանն իր անջն ուներ ախպիսի համեմատաբար հեշտ հաղթահարելի թշնամիներ, ինչպես են՝ ավելի կամ պակաս չափով թույլ ուստական բուրժուազիան, գյուղացիական «բուռտերից» վերջնականապես բարոյալքված կալվածատերերի դասակարգը և պատերազմի ընթացքում բոլորովին սնանկացած համաձայնողական կուսակցութեանները (մենշևիկների ու ես-երների կուսակցութեանները):

Հինգերորդ՝ նա իր տրամադրութեան տակ ուներ յերիտասարդ պետութեան ահագին տարածութեանները, վորտեղ կարող եր ազատորեն մանելրել, նահանջել, յերբ իրադրութեանն այդ եր պահանջում, դադար առնել, ուժերը հավաքել և այլն:

Վեցերորդ՝ հակահեղափոխութեան դեմ մղած իր պայքարում Հոկտեմբերյան հեղափոխութեանը կարող եր հուսալ, վոր յերկրի ներսում առկա յեն բավարար

քանակով պարենավորման, վառելիքի ու հումքի տեսակարաններ:

Այս արտաքին ու ներքին հանդամանքների զուգակցությունն ստեղծեց այն յուրահատուկ իրադրությունը, վերը վերոջեց Հոկտեմբերյան հեղափոխության հաղթության համեմատական հեշտությունը:

Այս չի նշանակում, իհարկե, վոր Հոկտեմբերյան հեղափոխությունը չունեի իր միևնույները՝ արտաքին ու ներքին իրադրության իմաստով: Ի՞նչ արժի, որինակ, այնպիսի մի միևնույն, ինչպես Հոկտեմբերյան հեղափոխության հայտնի միայնությունն է, նրա կողքին ու նրա հարևանությունը խորհրդային յերկրի բացակայությունը, յերկիր, վորի վրա նա կարողանար հենվել: Անտարակուսելի յե, վոր ապագա հեղափոխությունը, որինակ՝ Գերմանիայում, այս տեսակետից սվեյի նպաստավոր դրություն մեջ կլինի, վորովհետև նա իրեն հարևան ունի իր ուժով այնպիսի չուրջ մի խորհրդային յերկիր, ինչպես մեր Խորհրդային Միությունն է: Ել յես չեմ խոսում Հոկտեմբերյան հեղափոխության այնպիսի միևնույն մասին, ինչպես պրոլետարական մեծամասնության բացակայությունն է յերկրում:

Իայց այս միևնույները միայն ընդգծում են Հոկտեմբերյան հեղափոխության ներքին ու արտաքին այն պայմանների յուրորինակության հսկայական նշանակությունը, վորոնց մասին վերը խոսվել է:

Այդ յուրորինակության մասին վոջ մի րոպե չի կարելի մոռանալ: Նրա մասին առանձնապես հարկավոր է հիշել 1923 թվի աշնան դեմանական անցքերը վեր-

յուծելիս: Նրա մասին ամենից առաջ պետք է հիշել բնկ. Տրոցկին, վորն անհիմն կերպով անալոգիա յե կատարում Հոկտեմբերյան հեղափոխության ու Գերմանիայի հեղափոխության միջև և անդուսպ կերպով խարաղանում է դեմանական կոմկուսակցությանը՝ նրա իսկական ու յերևակայական սխալների համար:

«Ռուսաստանի համար,—ասում է Լենինը,—1917 թվի կոնկրետ; պատմականորեն չափազանց որիզինալ սխտուցեցալում հեշտ էր սոցիալիստական հեղափոխություն սկսելը, մինչև ռաշաբուսակել այն և մինչև վերջը հասցնել՝ Ռուսաստանի համար ավելի դժվար կլինի, քան յեվրոպական յերկրների համար: Գեոեո 1918 թվականի սկզբին ինձ հարկ յեղավ մասնանշել այս հանգամանքը, և դրանից հետո յերկամյա վորձը լիովին հաստատեց այսպիսի կշտադատության ճշտությունը: Այնպիսի սպեցիֆիկ պայմաններ, ինչպիսին են՝ 1) խորհրդային հեղաշրջման հեա իմպերիալիստական պատերազմի վերջնալը միացնելու հնարավորությունը, մի պատերազմ, վոր աներևակայլիորեն տանջել է բանվորներին ու դյուղացիներին և վերջացել է խորհրդային հեղաշրջման շնորհիվ: 2) իմպերիալիստական գլոշտիչներ յերկու համալսարհորեն—հոր խմբերի մահացու կելվը վորոջ ժամանակով ոգտադործելու հնարավորությունը, խմբեր, վորոնք շեյին կարող միանալ խորհրդային թշնամուդեմ: 3) համեմատաբար յերկարատե քաղաքացիական պատերազմին դիմանալու հնարավորությունը, մասամբ յերկրի հսկայական ծավալի ու հողորդակցության վատ միջոցների շնորհիվ: 4) այնպիսի խորը բուրժուադեմոկրատական հեղափոխական շարժման առկայությունը դյուղացիության մեջ, վոր պրոլետարիատի կուսակցությունը դյուղացիների կուսակցությունից (սոց.—հեղ. կուսակցությունից, վորն իր մեծամասնությամբ իրստ թշնամի յե բողշեիզմին) վերցրեց հեղափոխական պահանջները և մեկ անգամից իրականացրեց դրանք՝ քաղաքական իշտանությունը պրոլետարիատի կողմից նվաճված լինելու շնորհիվ.—այդպիսի սպեցիֆիկ պայմաններ Արևմտյան Յեվրոպայում այժմ չկան և այդպիսի կամ դրանց նման պայմանների կրկնվելը շատ էլ հեշտ

քան չի: Ահա թե ինչու, ի միջի ալոց, — բացի մի շարք այլ պատճառներից, — Արևմտյան Յեզրուպայի համար սոցիալիստական հեղափոխութիւն սկսելն ավելի դժվար է, քան մեզ համար» (տե՛ս հ. XXV, էջ 206—207):

Լենինի այս խոսքերը չի կարելի մոռանալ:

II. ՀՈԿՏԵՄԲԵՐԹԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՅԵՐԿՈՒ ԱՌԱՆՃՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ԿՍՄ ՀՈԿՏԵՄԲԵՐԸ ՅԵՎ ԸՆԿ. ՏՐՈՅԿՈՒՊԵՐՄԱՆԵՆՏ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԹԵՈՐԻԱՆ

Գոյութիւն ունեն Հոկտեմբերյան հեղափոխութեան յերկու առանձնահատկութիւններ, վորոնց պարզելն անհրաժեշտ է ամենից առաջ նրա համար, վորպէսզի հասկանանք այդ հեղափոխութեան ներքին իմաստն ու պատմական նշանակութիւնը:

Այդ ի՞նչ առանձնահատկութիւններ են:

Այդ, նախ՝ այն վիաստն է, վոր պրոլետարիատի դիկտատուրան մեզ մոտ ծնւլեց վորպէս մի իշխանութիւն, վորը ծագել է պրոլետարիատի ու գյուղացիութեան աշխատավոր մասսաների դաշինքի հիման վրա, ընդ վորում վերջինները ղեկավարվում են պրոլետարիատի կողմից: Յերկրորդ՝ դա այն վիաստն է, վոր պրոլետարիատի դիկտատուրան մեզ մոտ հաստատվել է վորպէս արդյունք սոցիալիզմի հաղթութեան կապիտալիստներն թիչ գարգացած մի յերկրում այն ժամանակ, յերբ կապիտալիզմը պահպանվել է մյուս, կապիտալիստներն ավելի զարգացած, յերկիրներում: Այդ չի նշանակում, իհարկե, թե Հոկտեմբերյան հեղափոխութիւնն ուրիշ առանձնահատկութիւններ չունի: Բայց

մեզ համար այժմ կարևոր են հենց այս յերկու առանձնահատկութիւնները վոր՛չ միայն այն պատճառով, վոր նրանք հստակորեն արտահայտում են Հոկտեմբերյան հեղափոխութեան ելութիւնը, այլև այն պատճառով, վոր նրանք հիանալի կերպով բացահայտում են «պերմանենտ հեղափոխութեան» թեորիայի ոպորտունիստական բնութիւնը:

Համառոտակի քննենք այդ առանձնահատկութիւնները:

Քաղաքային ու գյուղական մանր բուրժուազիայի աշխատավոր մասսաների հարցը, այդ մասսաներին պրոլետարիատի կողմը նվաճելու հարցը պրոլետարական հեղափոխութեան կարևորագոյն հարցն է: Իշխանութեան համար մղվող պայքարում թե ո՞ւմ կաջակցեն քաղաքի ու գյուղի աշխատավոր մարդիկ՝ բուրժուազիայի՞ն, թե պրոլետարիատին, նա ո՞ւմ ղեկերվը կդառնա՝ բուրժուազիայի՞ ղեկերվը, թե պրոլետարիատի ղեկերվը, — սրանից է կախված հեղափոխութեան բախտն ու պրոլետարիատի դիկտատուրայի հաստատուն լինելը: 48 և 71 թվականների հեղափոխութիւնները Յրանսիայում կործանվեցին գլխավորապէս այն պատճառով, վոր գյուղացիական ղեկերվները բուրժուազիայի կողմը դանվեցին: Հոկտեմբերյան հեղափոխութիւնը հաղթեց այն պատճառով, վոր կարողացավ բուրժուազիայից խլել նրա գյուղացիական ղեկերվները, կարողացավ այդ ղեկերվները նվաճել պրոլետարիատի կողմը, և այդ հեղափոխութեան մեջ պրոլետարիատը յեղավ քաղաքի ու գյուղի աշխատավոր մարդկանց միլիոնավոր մասսաների միակ ղեկավարող ուժը:

Ով չի հասկացել այս, նա յերբեք չի հասկանա Վո'չ Հոկտեմբերյան հեղափոխութեան բնույթը, Վո'չ պրոլետարիատի դիկտատուրայի բնութիւնը, Վո'չ ել մեր պրոլետարական իշխանութեան ներքին քաղաքականութեան յուրորինակութիւնը:

Պրոլետարիատի դիկտատուրան սոսկական կառավարական մի վերնախաւ չէ, Վորը «վարպետրեն» «հատընտրված է» «փորձված ստրատեգի» հոգատար ձեռքով և «խեղացիորեն հենյուժ է» բնակչութեան այս կամ այն խավերի վրա: Պրոլետարիատի դիկտատուրան պրոլետարիատի ու դյուղացիութեան աշխատավոր մասսաների դասակարգային դաշինքն է՝ կապիտալի տապալման համար, սոցիալիզմի վերջնական հաղթութեան համար, պայմանով, Վոր այդ դաշինքի ղեկավար ուժը պրոլետարիատն է հանդիսանում:

Այսպիսով խոսքն այնմասին չէ այստեղ, Վոր «մի քիչ» թերազնահատվեն, կամ «մի քիչ» դերազնահատվեն դյուղացիական շարժման հեղափոխական հնարավորութիւնները, ինչպես այժմ սիրում են արտահայտվել «պերմանենտ հեղափոխութեան» դիվանադիտական պաշտպաններէջ Վոմանք: Խոսքը վերաբերում է Հոկտեմբերյան հեղափոխութեան հետեանքով ծագած նոր պրոլետարական պետութեան բնութեանը: Խոսքը վերաբերում է պրոլետարիատի իշխանութեան բնույթին, պրոլետարիատի բուն իսկ դիկտատուրայի հիմունքներին:

«Պրոլետարիատի դիկտատուրան,—ասում է Լենինը,—աշխատավորութեան ավանդաբար պրոլետարիատի ու աշխատավորներէ վոչ-պրոլետարական բաղձաթիվ խավերի (մանր բուրժուազիա, մանր տնտեսատիրուկներ, դյուղացիութեան, ինտելիգենցիա և

այն), կամ նրանց մեծամասնութեան միջև կնքված դասակարգային դաշինքի հատուկ ձևն է,—մի դաշինք, Վորն ուղղված է կապիտալի դեմ,—դաշինք կապիտալը լիովին տապալելու, բուրժուազիայի դիմադրութեան և ռեստավրացիայի նրա կողմէջ յեղած փորձերը լիովին ճնշելու նպատակով, դաշինք սոցիալիզմի վերջնական ստեղծման ու ամրացման նպատակով» (տե՛ս հ. XXIV, էջ 311):

Յեւլ այնուհետև.

«Պրոլետարիատի դիկտատուրան, յեթե այս լատինական, դեմտական, պատմա-փիլիսոփայական արտահայտութիւնը թարգմանենք ավելի պարզ լեզվով, ահա թե ինչ է նշանակում. միայն Վորը դասակարգ, այն է՝ քաղաքային և առհասարակ ֆարքիկադործարանային, արդյունաբերական բանվորներն են ի վիճակի ղեկավարելու աշխատավորներին ու շահագործվողներին Վորը մասսային՝ կապիտալի լծի տապալման համար մղվող պայքարում, բուն իսկ տապալման ընթացքում, հաղթութեան պահպանման ու ամրացման համար մղվող պայքարում, նոր, սոցիալիստական, հասարակակարգ ստեղծելու դործում, դասակարգերի իրակատար Վոնչպացման համար մղվող ամբողջ պայքարում» (տե՛ս հ. XXIV, էջ 336):

Այս է պրոլետարիատի դիկտատուրայի այն թեորիան, Վոր տվել է Լենինը:

Հոկտեմբերյան հեղափոխութեան առանձնահատկութիւններէջ մեկն այն է, Վոր այդ հեղափոխութիւնը պրոլետարիատի դիկտատուրայի լենինյան թեորիայի կլասիկ կիրառումն է:

Միքանի ընկերներ յենթադրում են, թե այդ թեորիան զուտ «ոուսական» թեորիա չէ, Վորը կապ ունի միայն ոուսաստանյան իրականութեան հետ: Այդ ճիշտ չէ: Այդ միանգամայն սխալ է: Խոսելով պրոլետարիատի ղեկավարած վոչ-պրոլետարական դասակարգերի աշխատավոր մասսաների մասին՝ Լենինը նկատի

ունի վո՛չ միայն ուսական գյուղացիներին, այլև խորհրդային Միության դեռևս մոտ անցյալում Ռուսաստանի գաղութներ ներկայացնող ծայրամասերի աշխատավորական տարրերին: Լենինն անդադար պնդում էր, վոր Ռուսաստանի պրոլետարիատն առանց այդ այլազգի մասսաների հետ դաշինք կնքելու չի կարողանա հաղթել: Ազգային հարցին վերաբերող իր հոդվածներում և Կոմինտերնի կոնգրեսներում արտասանած իր ճառերում Լենինը բազմիցս ասել է, վոր համաշխարհային հեղափոխության հաղթութունն անհնարին է առանց առաջավոր յերկիրների պրոլետարիատի հեղափոխական դաշինքի, հեղափոխական բոլկի՝ ստրկացված գաղութների ճնշված ժողովուրդներին հետ: Բայց ի՞նչ են գաղութները, յեթե վոչ նույն այդ ճնշված աշխատավոր մասսաները, և ամենից առաջ գյուղացիության աշխատավոր մասսաները: Ո՞ւմ հայտնի չէ, վոր գաղութներն ազատագրման հարցը, ըստ եյուրօրյան, վոչ-պրոլետարական դասակարգերի աշխատավոր մասսաները Ֆինանսական կապիտալի ճնշումից ու շահագործումից ազատելու հարցն է:

Բայց սրանից հետևում է, վոր պրոլետարիատի դիկտատուրայի լենինյան թեորիան զուտ «ուսական» թեորիա չէ, այլ մի թեորիա յե, վորը պարտադիր է բոլոր յերկիրներին համար: Բողլեիզմը միայն ուսական յերևույթ չէ: «Բողլեիզմը», — ասում է Լենինը, — «տակտիկայի տիպար է բոլորի համար» (տե՛ս 4. XXIII, էջ 386):

Սրանք են Հոկտեմբերյան հեղափոխության առաջին առանձնահատկության բնորոշ գծերը:

Ի՞նչպես է ընկ. Տրոցկու «պերմանենտ հեղափոխու-

թյան» թեորիայի բանը Հոկտեմբերյան հեղափոխության այս առանձնահատկության տեսակետից:

Ձեռք ընդարձակաբանի ընկ. Տրոցկու 1905 թվականի դեկտեմբերի մասին, յերբ նա «պարզապես» մոռացել էր գյուղացիության՝ վորպես հեղափոխական ուժի՝ մասին, առաջադրելով «առանց ցարի, իսկ վառավարությունը բանվորական» լողունգը, այսինքն՝ հեղափոխություն առանց գյուղացիության՝ լողունգը: Նույնիսկ ընկ. Ռադեկը, «պերմանենտ հեղափոխության» այդ դիվանագիտական պաշտպանը, այժմ հարկադրված է ընդունել, վոր «պերմանենտ հեղափոխությունը» 1905 թվականին նշանակում էր իրականությունից «ցատկում դեպի ողջ» (տե՛ս «Պրավդա», 1924 թվի դեկտեմբերի 14): Հիմա յերևի բոլորն էլ ընդունում են, վոր այլևս չարժե զբաղվել այդ «ցատկումով դեպի ողջ»:

Ձեռք ընդարձակաբանի նաև ընկ. Տրոցկու պատերազմի ժամանակաշրջանի, ասենք, 1915 թվականի, դեկտեմբերի մասին, յերբ նա իր «Պայքար իշխանության համար» հոդվածում, յեղնելով այն բանից, թե «մենք ապրում ենք իմպերիալիզմի դարաշրջանում», վոր իմպերիալիզմը «վո՛չ թե բուրժուական ազգն է հակադրում հին ուժիմին, այլ պրոլետարիատը՝ բուրժուական ազգին», յեկավ այն յեղրակացուցության, վոր գյուղացիության հեղափոխական դերը պետք է նվազի, վոր հողի կոնֆիսկացիայի լողունգն արդեն չունի այն նշանակությունը, ինչ նա ուներ առաջներում (տե՛ս «1905 թվականը», էջ 289—292): Հայտնի յե, վոր Լենինը, քննության առնելով ընկ. Տրոցկու այդ հոդվածը, այն ժամանակ մեղադրում էր նրան «գյուղացիության

50
33
11

գերը» «Ժխտելու» համար, ասելով, վոր «Տրոցկին իրականում ողնում է Ռուսաստանի լիբերալ բանվորական քաղաքագետներին, վորոնք գյուղացիութան դերի «Ժխտում» ասելով՝ հասկանում են հեղափոխութան համար գյուղացիներին վտաքի հանել չցանկանալը» (տե՛ս հ. XVIII, էջ 318) :

Այլևի լավ է անցնենք այս հարցի վերաբերյալ ընդ-Տրոցկու ավելի ուշ ժամանակվա աշխատութուններին, այն ժամանակաշրջանի աշխատութուններին, յերբ պրոլետարական դիկտատուրան արդեն կարողացել էր հաստատվել և յերբ ընդ Տրոցկին հնարավորութուն ունեւր գործով ստուգելու «պերմանենտ հեղափոխութան» իր թեորիան և ուղղելու իր սխալները: Վերջնենք ընդ Տրոցկու «1905 թվականը» զբքի «Առաջաբանը», վոր զբված է 1922 թվին: Ահա թե ինչ է ասում ընդ Տրոցկին այդ «Առաջաբանում» «պերմանենտ հեղափոխութան» մասին.

«Հենց 1905 թվի հունվարի 9-ի և հոկտեմբերյան գործադուլի արանքում ընկած ժամանակամիջոցում կազմավորվեցին հեղինակի այն հայացքները Ռուսաստանի հեղափոխական զարգացման բնույթի մասին, վորոնք ստացան «պերմանենտ հեղափոխութան» թեորիա անունը: Այդ խրթին անվանումն արտահայտում էր այն միտքը, թե ուսական հեղափոխութունը, վորի առաջ անմիջականորեն բուրժուական նպատակներ են կանգնած, չի կարողանա, սակայն, կանգ առնել նրանց վրա: Հեղափոխութունը չի կարողանա իր մերձավոր բուրժուական խնդիրները լուծել այլ կերպ, բայց յեթե իշխանութան դուրս կանգնեցնելով պրոլետարիատին: Իսկ վերջինս, իշխանութունն իր ձեռքն առնելով, հեղափոխութան մեջ չի կարողանա իրեն սահմանափակել բուրժուական շրջանակներով: Ընդհակառակը, հենց իր հաղթութունն սպահովելու համար հարկ կլինի, վոր պրոլետարական ավանգարդն իր սերտակցութան առաջին իսկ պահին ամենախոր ներխուժում-

ներ կատարի վո՛չ միայն ֆեոդալական, այլև բուրժուական սեփականութան ներքը: Ընդ սմին նա քշնամական ընդհարումների մեջ կմանի վո՛չ միայն բուրժուազիայի բոլոր խմբավորումների հետ, վորոնք իրեն աջակցում էին իր հեղափոխական պայքարի առաջին պահին, այլև գյուղացիութան լայն մասսաների հետ, վորոնք աջակցութամբ նա իշխանութան է հասել: Գյուղացիական բնակչութան ճնշող մեծամասնութուն ունեցող հետամնաց մի յերկրում բանվորական կառավարութան դրության հակառակ թյունները կարող են իրենց լուծումը գտնել միայն ժեղազային մասշտաբով, պրոլետարիատի համաշխարհային հեղափոխութան ասպարիզում» (տե՛ս ընդ Տրոցկու «1905 թվականը» զբքի վերջ հիշատակված «Առաջաբանը») 1:

Այսպես է ասում ընդ Տրոցկին իր «պերմանենտ հեղափոխութան» թեորիայի մասին:

Իսկական է միայն բաղդատել այս ցիտատը Լենինի յերկերից վերը բերված պրոլետարիատի դիկտատուրային վերաբերող ցիտատների հետ, վորպեսզի հատկաշունք այն ամբողջ անդունդը, վոր բաժանում է պրոլետարիատի դիկտատուրայի լենինյան թեորիան ընդ Տրոցկու «պերմանենտ հեղափոխութան» թեորիայից:

Լենինը խոսում է պրոլետարիատի ու գյուղացիութան աշխատավորական խավերի դաշինքի մասին, վորպես պրոլետարիատի դիկտատուրայի հիմքի մասին: Իսկ Տրոցկու մոտ ստացվում են «պրոլետարական ավանգարդի» «քշնամական ընդհարումներ» «գյուղացիութան լայն մասսաների» հետ:

Լենինը խոսում է պրոլետարիատի կողմից աշխատավորների ու շահագործվողների մասսաները ղեկավարելու մասին: Իսկ Տրոցկու մոտ ստացվում են «հակասուրբյուններ բանվորական կառավարութան դրության

1 Ընդգծումն իմն է: Ի. Սու.:

մեջ՝ դյուղացիական բնակչութեան ճնշող մեծամասնութիւնն ունեցող հետամնաց մի յերկրում»:

Ըստ Լենինի՝ հեղափոխութիւնն իր ուժերը քաղում է ամենից առաջ հենց Ռուսաստանի բանվորները ու դյուղացիները միջից: Իսկ Տրոցկու մոտ այնպես է դուրս գալիս, վոր անհրաժեշտ ուժերը կարելի չէ քաղել միայն «պրոլետարիատի համաշխարհային հեղափոխութեան ասպարիզում»:

Իսկ ի՞նչպես վարվենք, յեթե միջազգային հեղափոխութեանը վիճակիւմ է ուշացումով գալ: Մեր հեղափոխութեան համար լույսի վորեւէ նշույլ կա՞ արդե՞ր: Ընկ. Տրոցկին չի տալիս լույսի վորչ մի նշույլ, վորովհետեւ «հակասութիւնները բանվորական կառավարութեան դրութեան մեջ... կկարողանան իրենց լուծումը գտնել միայն... պրոլետարիատի համաշխարհային հեղափոխութեան ասպարիզում»: Ըստ այս պլանի՝ մեր հեղափոխութեան համար մնում է միայն մի հեռանկար. քաջ տալ իր դոյուլթիւնը սեփական հակասութիւնները մեջ և արմատի վրա փռել՝ համաշխարհային հեղափոխութեան սպասելով:

Ի՞նչ է պրոլետարիատի դիկտատուրան՝ ըստ Լենինի:

Պրոլետարիատի դիկտատուրան մի իշխանութիւն է, վոր հենվում է պրոլետարիատի ու դյուղացիութեան աշխատավոր մասսաների դաշինքի վրա, վորը կնքված է «կապիտալի լիակատար տապալման» համար, «սոցիալիզմի վերջնական ստեղծման ու ամբապնդման» համար:

Ի՞նչ է պրոլետարիատի դիկտատուրան՝ ըստ Տրոցկու:

Պրոլետարիատի դիկտատուրան մի իշխանութիւն է,

վորը «թնամական ընդհարումները մեջ» է մտնում «դյուղացիութեան լայն մասսաների» հետ և «հակասութիւնները» լուծումը վորոնում է միայն «պրոլետարիատի համաշխարհային հեղափոխութեան ասպարիզում»:

Ինչո՞վ է տարբերվում «պերմանենտ հեղափոխութեան» այս «թեորիան» պրոլետարիատի դիկտատուրայի գաղափարի ժխտման վերաբերյալ մենչևիզմի հայտնի թեորիայից:

Ըստ Եյուլթեյան՝ վոչնչով:

Տարակույսներն անհնարին են: «Պերմանենտ հեղափոխութիւնը» դյուղացիական շարժման հեղափոխական հնարավորութիւնների սոսկական թերազնահատուկութիւնն է: «Պերմանենտ հեղափոխութիւնը» դյուղացիական շարժման մի այնպիսի թերազնահատուկութիւն է, վորը դեպի պրոլետարիատի դիկտատուրայի լենինյան թեորիայի ժխտումն է տանում:

Ընկ. Տրոցկու «պերմանենտ հեղափոխութիւնը» մենչևիզմի ալյատեսակութիւնն է:

Այսպես է բանը Հոկտեմբերյան հեղափոխութեան առաջին առանձնահատկութեան վերաբերմամբ:

Վորո՞նք են Հոկտեմբերյան հեղափոխութեան յերկրորդ առանձնահատկութեան բնորոշ գծերը:

Ուսումնասիրելով իմպերիալիզմը, մանապէս պատերազմի ժամանակաշրջանում, Լենինը հանդէպ կապիտալիստական յերկիրներին տնտեսական ու քաղաքական զարգացման անհավասարաչափութեան, թուլիչ քաճկութեան որեւէին: Ըստ այդ որեւէին իմաստի՝ ձեռնարկութիւնները, տրեստները, արդյունաբերութեան ճյուղերը ու առանձին յերկիրները զարգացումը կատարվում է

վո՛չ թե հավասարաչափ կերպով, վո՛չ թե սահմանված հերթականութեամբ կարգով, վո՛չ թե այնպես, վոր մի տրեստը, արդյունաբերութեան մի ճյուղը կամ մի յերկիրն ամբողջ ժամանակ առջևից դնան, իսկ մյուս տրեստները կամ յերկիրները հաջորդականորեն մեկը մյուսի հետևից հետ մնան,—այլ թո՛ւիջքաճև՝ մի շարք յերկիրներէ զարգացման մեջ տեղի ունեցող ընդհատումներով ու մյուս յերկիրներէ զարգացման մեջ տեղի ունեցող թո՛ւիջքներով դեպի առաջ: Ընդամին հետ մնացող յերկիրներէ հին դիրքերը պահպանելու «միանգամայն որինական» ձգտումը և առաջ ցատկած յերկիրներէ՝ նոր դիրքեր զայլթելու նույնքան «որինական» ձգտումն ունենում են այն հետևանքը, վոր իմպերիալիստական յերկիրներէ սրատերազմական ընդհարումներն անխուսափելի անհրաժեշտություն են հանդիսանում: Այդպես պատահեց, որինակ, Գերմանիային, վորը կես դար առաջ, Ֆրանսիայի ու Անգլիայի հետ համեմատած, մի հետամնաց յերկիր եր: Նույն այդ քանը պետք է ասել ճապոնիայի մասին՝ Ռուսաստանի հետ համեմատած: Սակայն հայտնի յե, վոր արդեն XX դարի սկզբին Գերմանիան ու ճապոնիան այնքան եյին առաջ ցատկել, վոր առաջինը կարողացել եր անցնել Ֆրանսիայից ու սկսել եր նեղել Անգլիային համալսարհային շուկայում, իսկ յերկրորդը՝ Ռուսաստանին: Հենց այդ հակասություններից ել, ինչպես հարոնի յե, ծագեց մոտ անցյալի իմպերիալիստական սրատերազմը:

Այդ որենքը յելնում ե նրանից, վոր

1) «Կապիտալիզմը վերաճել ե մի բուռն «առաջավոր» յերկիրների կողմից յերկրագնդի բնակչութեան հակայական մեծամասնությունը զաղութային ճնշման ու

Ֆինանսական խեղճման յենթարկելու համալսարհային սխտեմի» (տե՛ս Լենինի «Իմպերիալիզմի» Փրանսական հրատարակութեան առաջաբանը, հ. XIX, եջ 74):

2) «Այդ «ավարի» բաժանումը կատարվում ե համալսարհորեն հզոր, վոտից-գլուխ զինված յերկու-յերեք դիշատիչների (Մմերիկա, Անգլիա, Ճապոնիա) միջև, վորոնք իրենց ավարը բաժանելու համար մղած իրենց սրատերազմի մեջ են քաշում ամբողջ յերկրագունդը» (տե՛ս նույն տեղը):

3) Հակասությունների աճումը Ֆինանսական ճնշման համալսարհային սխտեմի ներսում և ուղղմական ընդհարումների անխուսափելիությունը տանում են դեպի այն, վոր իմպերիալիզմի համալսարհային ճակատը հեղափոխութեան համար դառնում ե դյուրախոցելի, իսկ այդ ճակատի ճեղքումն առանձին յերկիրների կողմից՝ հալանական:

4) Այդ ճեղքումն ամենից ավելի հալանական կերպով կարող ե տեղի ունենալ այն կետերում և այն յերկիրներում, վորտեղ իմպերիալիստական ճակատի շղթան ավելի թույլ ե, այսինքն՝ վորտեղ իմպերիալիզմն ամենից քիչ ե կոտրված, իսկ հեղափոխութեան համար ծաղալվելն ամենից հեշտ ե:

5) Դրա համար ել սոցիալիզմի հաղթությունը մի յերկրում,—յեթե այդ յերկիրը նույնիսկ պակաս ե զարգացած կապիտալիստորեն, իսկ կապիտալիզմը պահպանվել ե մյուս յերկիրներում, յեթե այդ յերկիրները կապիտալիստորեն նույնիսկ ավելի յեն զարգացած,—լիովին հնարավոր ե ու հալանական:

Սրանք են՝ յերկու խոսքով ասած՝ պրոլետարական հեղափոխութեան լենինյան թեորիայի հիմունքները :

Վո՞րն է Հոկտեմբերյան հեղափոխութեան յերկրորդ առանձնահատկութիւնը :

Հոկտեմբերյան հեղափոխութեան յերկրորդ առանձնահատկութիւնն այն է, վոր այդ հեղափոխութիւնը պրոլետարական հեղափոխութեան լենինյան թեորիան պրակտիկայում կիրառելու տիպարն է :

Ով չի հասկացել Հոկտեմբերյան հեղափոխութեան այս առանձնահատկութիւնը, նա յերբեք չի հասկանա Վո՛չ այդ հեղափոխութեան ինտերնացիոնալ բնութիւնը, Վո՛չ նրա միջազգային հսկայական հղորութիւնը, Վո՛չ նրա յուրորինակ արտաքին քաղաքականութիւնը :

«Տնտեսական ու քաղաքական զարգացման անհավասարաչափութիւնը, —սուտ է Լենինը,—կապիտալիզմի անոլոյանական որեւնքն է : Այստեղից հետևում է, վոր սոցիալիզմի հաղթութիւնը հնարավոր է սկզբում միջանի կամ նույնիսկ մի՛ առանձին վերջրած՝ կապիտալիստական յերկրում : Այդ յերկրի հաղթած պրոլետարիատը, եքսպրոպրիացիայի յենթարկելով կապիտալիստներին և իր յերկրում սոցիալիստական արտադրութիւն կազմակերպելով՝ վտարի կենքեր մնացած, կապիտալիստական աշխարհի դէմ՝ իր կողմը դրավելով մյուս յերկիրներին ճնշված դասակարգերին, այդ յերկիրներում ապստամբութիւն բարձրացնելով կապիտալիստներին դեմ, անհրաժեշտութեան դեպքում նույնիսկ ռազմական ուժով հանդես դալով շահագործող դասակարգերի և նրանց պետութիւններին դեմ» : Վորովհետև «անհնարին է ազդերի ազատ միավորումը սոցիալիզմի մեջ առանց սոցիալիստական հանրապետութիւնների շատ թե քիչ յերկարատև, համառ պայքարի՝ հետամնաց պետութիւնների դեմ» (տե՛ս հ. XVIII, էջ 232—233) :

Ի՞նչպէս յերկիրներին ոպորտունիստները պնդում են, թե պրոլետարական հեղափոխութիւնը կարող է սկըս-

վել—յեթե նա, ըստ նրանց թեորիայի, ընդհանրապես պետք է վորևէ տեղ սկսվի—միայն արդիւնաբերակաւ նորեն զարգացած յերկիրներում, թե վորքան ավելի յեն զարգացած այդ յերկիրներն արդիւնաբերական տեսակետից, այնքան ավելի շնտեր կան սոցիալիզմի հաղթութեան համար, ընդ վորում մի յերկրում, այն էլ կապիտալիստներն քիչ զարգացած յերկրում, սոցիալիզմի հաղթելու հնարավորութիւնը նրանք բացառում են իրրև միանգամայն անհավանական մի բան : Լենինը դեռևս պատերազմի ժամանակ, հենվելով իմպերիալիստական պետութիւններին անհավասարաչափ զարգացման որեւնքի վրա, ոպորտունիստներին հակադրում է պրոլետարական հեղափոխութեան իր թեորիան այն մասին, վոր սոցիալիզմը կարող է հաղթել մի յերկրում, յեթե նույնիսկ այդ յերկիրը կապիտալիստներն պակաս է զարգացած :

Հայտնի յե, վոր Հոկտեմբերյան հեղափոխութիւնն ամբողջապես հաստատեց պրոլետարական հեղափոխութեան լենինյան թեորիայի ճշտութիւնը :

Ի՞նչպէս է ընկ. Տրոցկու «պերմանենտ հեղափոխութեան» բանը պրոլետարական հեղափոխութեան լենինյան թեորիայի տեսակետից :

Վերցնենք ընկ. Տրոցկու «Մեր հեղափոխութիւնը» (1906 թ.) բրոշյուրը : Ընկ. Տրոցկին պրում է .

«Առանց յեկրոպական պրոլետարիատի պետական ուղղակի աջակցութեան՝ Ռուսաստանի բանվոր դասակարգը չի կարողանա իշխանութիւնը պահել և իր ժամանակավոր տիրապետութիւնը վերածել յերկարատև սոցիալիստական դիկտատուրայի : Սրա նկատմամբ մի բոպե անգամ չի կարելի կասկածել» (տե՛ս «Մեր հեղափոխութիւնը», էջ 278) :

Ինչի՞ մասին ե խոսում այս ցիտատը: Հենց այն մասին, վոր սոցիալիզմի հաղթութունը մի յերկրում, սովյալ դեպքում՝ Ռուսաստանում, անհնարին ե «առաջ ց յեվրոպական պրոլետարիատի պետական ուղղակի աջակցութեան», այսինքն՝ մինչև յեվրոպական պրոլետարիատի կողմից իշխանութուն նվաճելը:

Ի՞նչ ընդհանուր բան կա այս «թերիայի» ե Լենինի այն դրույթի միջև, վոր հնարավոր ե սոցիալիզմի հաղթանակը «մեկ՝ առանձին վերցրած՝ կապիտալիստական յերկրում»:

Պարզ ե, վոր այստեղ ընդհանուր վորչինչ չկա:

Բայց յենթադրենք, թե ընկ. Տրոցկու այս բրոշյուրը, վոր հրատարակվել ե 1906 թվականին, յերբ դեմ վար եր վորոշել մեր հեղափոխութեան բնույթը, ակամաս սխալներ ե պարունակում ե վորչ-լիովին ե համապատասխանում ընկ. Տրոցկու ավելի ուշ ժամանակաշրջանի հայացքներին: Քննութեան առնենք ընկ. Տրոցկու մեկ ուրիշ բրոշյուրը, նրա «Հաշտութեան ծրագիրը», վորը լույս ե ընծայվել 1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխութեան նախորդակին ե այժմ (1924 թ.) վերահրատարակվել ե «1917» գրքում: Այս բրոշյուրում ընկ. Տրոցկին քննադատում ե պրոլետարական հեղափոխութեան լենինյան թերիան մի յերկրում սոցիալիզմի հաղթելու մասին ե նրան հակադրում ե Յեվրոպայի Միացյալ Նահանգների լողունքը: Նա պնդում ե, թե սոցիալիզմի հաղթութունը մի յերկրում անհնարին ե, թե սոցիալիզմի հաղթութունը հնարավոր ե վորպես Յեվրոպայի միավորված ու Յեվրոպայի Միացյալ Նահանգներ կազմած միջանի հիմնական յերկիրների (Անգլիա, Ռուսաստան, Գերմանիա) հաղթութուն

միայն, կամ այդ հաղթութունը բոլորովին անհնարին ե: Նա ուղղակի ասում ե, վոր «հաղթական հեղափոխութունը Ռուսաստանում կամ Անգլիայում անբեկակայելի յե առանց Գերմանիայի հեղափոխութեան, ե ընդհակառակը» (տե՛ս «1917», ընկ. Տրոցկու Յերկերի III հ., մ. 1, էջ 89):

Պատմական փոքրիշատե կոնկրետ միակ նկատուումը Միացյալ Նահանգների լողունքի դեմ, — ասում ե ընկ. Տրոցկին, — ձեռնկերպվել ե չվեյցարական «Սոցիալ-դեմոկրատ»-ում (բուլե-վիկների այն ժամանակվա կենտրոնական որդանը: Ի. Ստ.) հետևյալ ֆրազի մեջ. «Տնտեսական ու քաղաքական զարգացման անհավասարաչափութունը կապիտալիզմի անպայմանական որենքն ե»: «Սոցիալ-դեմոկրատն» այստեղից անում եր այն հետևութունը, վոր հնարավոր ե սոցիալիզմի հաղթութունը մի յերկրում ե վոր այդ պատճառով կարիք չկա պրոլետարիատի դիլտատուրան յուրաքանչյուր առանձին պետութեան մեջ պայմանավորել Յեվրոպայի Միացյալ Նահանգների ստեղծումով: Վոր տարբեր յերկիրների կապիտալիստական զարգացումն անհավասարաչափ ե, այդ միանգամայն անվիճելի դատողութուն ե: Բայց այդ անհավասարաչափութունն ինքը միանգամայն անհավասարաչափ ե: Անգլիայի, Ավստրիայի, Գերմանիայի կամ Ֆրանսիայի կապիտալիստական մակարդակը միատեսակ չե: Բայց Աֆրիկայի ու Ասիայի հետ համեմատած՝ այդ բոլոր յերկիրները ներկայացնում են կապիտալիստական «Յեվրոպա», վորը հասունացել ե սոցիալական հեղափոխութեան համար: Վոր վորչ մի յերկիր իր պայքարում չպետք ե «սպասի» ուրիշներին — այս տարրական մի միտք ե, վորն ողտակար ու անհրաժեշտ ե կրկնել, վորպեսզի զուգահեռ ինտերնացիոնալ դրժողութեան դադափարը չնենգափոխվի ինտերնացիոնալ սպասողական անգործութեան դադափարով: Ուրիշներին չսպասելով՝ մենք սկսում ե շարունակում ենք պայքարն ողղային հողի վրա, լիովին հավատացած լինելով, վոր մեր նախաձեռնութունը զարկ կտա մյուս յերկիրներում տեղի ունեցող պայքարին. իսկ յեթե այդ տեղի չունենար, ապա անհուսալի կլիներ կարծել — այս են վկայում թե՛ պատմութեան փորձը, թե՛ թերիական նկատուումները, —

վոր, որինակ, հեղափոխական Ռուսաստանը կարող կլինի դիմա-
նալ պահպանողական Յեվրոպայի հանդեպ, կամ սոցիալիստական
Գերմանիան կարող կլինի մեկուսացած մնալ կապիտալիստական
աշխարհում» (տե՛ս ընկ. Տրոցկու Յերկերի 4. III, մ. 1,
էջ 89—90) :

Ինչպես տեսնում եք, մեր առջևն է Յեվրոպայի հիմ-
նական յերկիրներում սոցիալիզմի միաժամանակ հաղ-
թելու նույն թեորիան, վորը, իբրև կանոն, բացառում
է հեղափոխութեան լենինյան թեորիան՝ մի յերկրում
սոցիալիզմի հաղթելու մասին :

Ինչ խոսք, վոր սոցիալիզմի լիակատար հաղթութեան
համար, հին կարգերի վերականգնումից լիակատար
յերաշխիք ունենալու համար անհրաժեշտ են միջանի
յերկիրների պրոլետարների միահամուռ ջանքերը : Ինչ
խոսք, վոր առանց Յեվրոպայի պրոլետարիատի աջակ-
ցութեան մեր հեղափոխութեանը, Ռուսաստանի պրոլե-
տարիատը չէր կարողանա դիմակայել (УСТОЯТЬ) ընդ-
հանուր ճնշմանը, ճիշտ այնպես, ինչպես և Արևմուտքի
հեղափոխական շարժումն առանց Ռուսաստանի հեղա-
փոխութեան աջակցութեան չէր կարող զարգանալ այն
տեմպով, վորով նա սկսեց զարգանալ Ռուսաստանում
պրոլետարական դիկտատուրա հաստատելուց հետո :
Ինչ խոսք, վոր մեզ աջակցութիւնն է հարկավոր : Բայց
ի՞նչ բան է արևմտա-յեվրոպական պրոլետարիատի
աջակցութիւնը մեր հեղափոխութեանը : Յեվրոպական
բանվորների համակրանքը դեպի մեր հեղափոխութիւ-
նը, նրանց պատրաստակամութիւնը՝ խափանելու իմ-
պերիալիստներին՝ ինտերվենցիայի վերաբերյալ պլան-
ները—այս ամենն աջակցութիւնն է արդյոք, լուրջ
ոգնութիւնն է : Անպայման՝ այո՛ : Առանց այդպիսի

աջակցութեան, առանց վո՛չ միայն յեվրոպական բան-
վորների, այլև դադութեանն ու կախալ յերկիրներէ
այդպիսի աջակցութեան, այդպիսի ոգնութեան՝ Ռու-
սաստանի պրոլետարական դիկտատուրայի բանը
զժվար կլիներ : Արդյո՞ք մինչև այժմ բալական է յե-
ղել այդ համակրանքը և այդ ոգնութիւնը, վորը միա-
ցած է մեր կարմիր բանակի հզորութեան հետ և Ռու-
սաստանի բանվորների ու դուրդացիների՝ սոցիալիս-
տական հայրենիքը կրծքով պաշտպանելու պատրաստա-
կամութեան հետ, — արդյո՞ք այս ամենը բալական է
յեղել, վորպեսզի հետ մղենք իմպերիալիստների դրոհ-
ները և անհրաժեշտ պայմաններ նվաճենք լուրջ շինա-
բարական աշխատանքի համար : Այո՛, բալական է յե-
ղել : Այդ համակրանքն անձ՞ է արդյոք, թե նախորդ
է : Անպայման անում է : Այդպիսով՝ մենք ունե՞նք
արդյոք բարենպաստ պայմաններ վո՛չ միայն նրա հա-
մար, վորպեսզի առաջ շարժենք սոցիալիստական
տնտեսութիւնն կազմակերպելու գործը, այլև նրա հա-
մար, վորպեսզի, մեր հերթին, աջակցութիւնն ցույց
տանք ինչպես արևմտա-յեվրոպական բանվորներին,
այնպես ել Արևելքի ճնշված ժողովուրդներին : Այո՛,
ունենք : Դրա մասին պերճախոս կերպով վկայում է
պրոլետարական դիկտատուրայի յոթնամյա պատմու-
թիւնը Ռուսաստանում : Կարելի՞ յե արդյոք ժխտել,
վոր աշխատանքային հուժկու վերելքը մեղանում թլըս-
վել է արդեն : Վո՛չ, չի կարելի ժխտել :

Այս ամենից հետո ի՞նչ նշանակութիւնն կարող է
ունենալ ընկ. Տրոցկու հայտարարութիւնն այն մա-
սին, թե հեղափոխական Ռուսաստանը չէր կարող դե-
մակայել պահպանողական Յեվրոպայի հանդեպ :

Դա կարող է միայն մի նշանակութուն ունենալ.— նախ՝ ընկ. Տրոցկին չի զբուս մեր հեղափոխութեան ներքին հղորութիւնը, յերկրորդ՝ ընկ. Տրոցկին չի հասկանում այն բարոյական աջակցութեան անդնահատելի նշանակութիւնը, վոր մեր հեղափոխութեանը ջույց են տալիս Արեւմուտքի բանվորներն ու Արեւելքի դուրսացիները. յերրորդ՝ ընկ. Տրոցկին չի կարողանում ըմբռնել այն ներքին անկարութիւնը, վորը ներկայումս մաշում է իմպերիալիզմին:

Տարւելով պրոլետարական հեղափոխութեան լենինյան թեորիայի քննադատութեամբ՝ ընկ. Տրոցկին անակնկալորեն դիտովին ջախջախեց իրեն 1917 թիւն լույս տեսած և 1924 թիւն վերահրատարակված իր «Հաշտութեան ծրագիր» բրոշյուրում:

Բայց դուցե հնացել է ընկ. Տրոցկու նաև ա՞յս բրոշյուրը, վորեւ պատճառով դադարելով նրա այժմբան հայացքներին համապատասխանելուց: Վերցնենք ընկ. Տրոցկու ավելի ուշ ժամանակների աշխատութիւնները, վորոնք գրվել են այն ժամանակ, յերբ պրոլետարական հեղափոխութիւնը հաղթել էր մի յերկրում, Ռուսաստանում: Վերցնենք, որինակ, «Հաշտութեան ծրագիր» բրոշյուրի նոր հրատարակութեան ընկ. Տրոցկու «Վերջարանք», վոր գրված է 1922 թիւականին: Ահա թե ինչ է գրում նա այդ «Վերջարանքում».

«Հաշտութեան ծրագրում» միքանի անգամ կրկնվող այն պնդումը, թե պրոլետարական հեղափոխութիւնը չի կարող հաղթականորեն ավարտվել ազգային շրջանակներում, թերևս, ընթացողներից վտանգ համար հերքված թվա մեր իտերոպային Հանրապետութեան համարյա հնգամյա փորձով: Բայց այդպիսի յեղրակացութիւնն անհիմն կլիներ: Այն փաստը, վոր ամբողջ աշխարհի դեմ բանվորական պետութիւնը կանդուն մնաց մի

յերկրում, այն էլ հետամնաց մի յերկրում, վկայում է պրոլետարիատի հսկայական հղորութեան մասին, վորն ուրիշ, ավելի առաջվոր, ավելի քաղաքակիրթ յերկիրներում ընդունակ կլինի հիրավի հրաշքեր դործելու: Բայց պաշտպանելով ու պահպանելով մեզ քաղաքական ու ռադմական իմաստով, վորպես պետութիւն, մենք սոցիալիստական հասարակութեան ստեղծման Հասանք և նույնիսկ շնորհանք... Քանի դեռ մնացած յեկրոպական պետութիւններում իշխանութեան գլուխ կանգնած է բուրժուազիան, մենք, պայքարելով տնտեսական մեկուսացման դեմ՝ ստիպված ենք համաձայնութիւն վորոնել կապիտալիստական աշխարհի հետ. միևնույն ժամանակ կարելի չէ վստահ կերպով ասել, վոր այդ համաձայնութիւնները, լավագոյն դեպքում, կարող են ոչնէլ մեզ բժշկելու այս կամ այն տնտեսական վերքերը, անկու այս կամ այն քայլը դեպի առաջ, բայց վոր սոցիալիստական տնտեսութեան իսկական վերելքը Ռուսաստանում հնարավոր կդառնա Յեկրոպայի կարևորագոյն յերկիրներում պրոլետարիատի կազմելուց ետո միայն»¹ (տե՛ս ընկ. Տրոցկու Յերկերի 4. III, մ. 1, էջ 92—93):

Այսպես է ասում ընկ. Տրոցկին՝ ակնհայտորեն մեղանչելով իրականութեան դեմ և համառորեն ջանալով փրկել «պեմանենտ հեղափոխութիւնը» վերջնական կործանումից:

Դուրս է դալիս, վոր, ինչպես էլ շուր ու մուռ դաս, սոցիալիստական հասարակութեան ստեղծման վո՛չ միայն «չենք հասել», այլ մինչև անգամ «չենք էլ մտտեցել»: Բանից դուրս է դալիս, վոր վոմանք «կապիտալիստական աշխարհի հետ համաձայնութիւնների դալու» հույս են ունեցել, բայց պարզվում է, վոր այդ համաձայնութիւններից նույնպես բան դուրս չի դալիս, վորովհետև, ինչպես էլ շուր ու մուռ դաս, «սոցիալիստական տնտեսութեան իսկական վերելք» չես

¹ Ընդգծումն իմն է: Ի. Ստ.:

Մինչև այժմ սովորաբար նշում էլին «պերմանենտ հեղափոխութեան» թեորիայի մի կողմը—գյուղացեական շարժման հեղափոխական հնարավորութեաներին չհավատալը: Այժմ, արդարացի լինելու համար, այդ կողմն անհրաժեշտ է լրացնել մշտա կողմով—Ռուսաստանի պրոլետարիատի ուժերին ու ընդունակութեաններին չհավատալով:

Ինչո՞վ է տարբերվում ընկ. Տրոցկու թեորիան մենչևիզմի սովորական թեորիայից այն մասին, թե սոցիալիզմի հաղթութեանը մի յերկրում, այն ել հետամնաց յերկրում, անհնարին է առանց պրոլետարիական հեղափոխութեան նախապես հաղթելուն «Արևմտյան Յեվրոպայի հիմնական յերկիրներում»:

Ըստ էյութեան՝ վոչնչով:

Տարակույսներն անհնարին են: Ընկ. Տրոցկու «պերմանենտ հեղափոխութեան» թեորիան մենչևիզմի այլատեսակութեանն է:

Վերջին ժամանակներս մեր մամուլում յերևան են յեկել փտած դիվանագետներ, վորոնք ջանում են «պերմանենտ հեղափոխութեան» թեորիան անցկացնել վորպես լենինիզմի հետ համատեղելի ինչ—վոր մի բան: Իհարկե, ասում են նրանք, այդ թեորիան անպետք դուրս յեկավ 1905 թվականին: Բայց ընկ. Տրոցկու ախան այն է, վոր նա այն ժամանակ առաջ եր վազել, վորո՞ճելով 1905 թվականի իրադրութեան նկատմամբ կիրառել այն, ինչ վոր այն ժամանակ չեր կարելի կիրառել:

Բայց հետագայում, ասում են նրանք, որինակ՝ 1917 թվականի հոկտեմբերին, յերբ հեղափոխութեանը կա-

րողացել եր լիովին հասունանալ, ընկ. Տրոցկու թեորիան իբր թե միանգամայն իր անդում դուրս յեկավ: Դժվար չե կռահել, վոր այդ դիվանագետներից ամենազխտավորն ընկ. Ռադեկն է: Չե՞ք հաճի արդյոք ունկնդրել:

«Պատերազմն անդունդ փորեց հող նվաճելու ու հաշտութեան ձգտող գյուղացիութեան և մանր բուրժուական կուսակցութեանների միջև. պատերազմը գյուղացիութեանը հանձնեց բանվոր դասակարգի և նրա ամենազորի՝ բոլշևիկների կուսակցութեանը: Հնարավոր դարձավ վո՛չ թե բանվոր դասակարգի ու գյուղացիութեան դիկտատուրան, այլ գյուղացիութեան վրա հենվող բանվոր դասակարգի դիկտատուրան: Այն, ինչ վոր Ռոզա Լուքսեմբուրգն ու Տրոցկին 1905 թվականին առաջադրում էին Լենինի դեմ (այսինքն «պերմանենտ հեղափոխութեանը»: Խ. Ստ.), իրականում պատմական զարգացման յերկրորդ ետապ դուրս յեկավ» (տե՛ս «Պրավդա» 1924 թ. փետրվարի 21, ՃՆ 42):

Այստեղ յուրաքանչյուր խոսքը խարդախումն է:

Ճիշտ չե, թե պատերազմի ժամանակ «հնարավոր դարձավ վո՛չ թե բանվոր դասակարգի ու գյուղացիութեան դիկտատուրան, այլ գյուղացիութեան վրա հենվող բանվոր դասակարգի դիկտատուրան»: Իրպես 1917 թվականի փետրվարյան հեղափոխութեանն եր պրոլետարիատի ու գյուղացիութեան դիկտատուրայի իրականացումը, վոր յուրատեսակ կերպով միահույսված եր բուրժուազիայի դիկտատուրայի հետ:

Ճիշտ չե, թե «պերմանենտ հեղափոխութեան» թեորիան, վորի մասին ընկ. Ռադեկն ամոթխածութեամբ լուծում է, 1905 թ. Ռոզա Լուքսեմբուրգն ու Տրոցկին են առաջադրել: Իրպես այդ թեորիան առաջադրել էլին Պարվուսն ու Տրոցկին: Այժմ, տասն ամիս անց,

ընկ. Ռադեկին ուղղում է իրեն՝ հարկայնոր համարելով հայհայել Պարվուսին «պերմանենտ հեղափոխութեան» համար (տե՛ս նրա հուղածը Պարվուսի մասին «Պրավդա»-յում)։ Իայց արդարութեանը պահանջում է ընկ. Ռադեկից, վոր հայհոյանքի յենթարկվի նաև Պարվուսի կոմպանիոնը—ընկ.Տրոցկին։

Ճիշտ չէ, թե 1905 թվի հեղափոխութեան կողմից դեն շարտված «պերմանենտ հեղափոխութեանը» ուղիղ դուրս յեկավ «պատմական զարգացման յերկրորդ ետապում», այսինքն Հոկտեմբերյան հեղափոխութեան ժամանակ։ Հոկտեմբերյան հեղափոխութեան ստորջը ընթացքը, նրա ամբողջ զարգացումը ցույց տվին ու պայտուցեցին «պերմանենտ հեղափոխութեան» թեորիայի լիակատար սնանկութեանը, նրա լիակատար անհամասեղելիութեանը լենինիզմի հիմունքների հետ։

Քաղցրիկ ճառերով ու փոսած դիվանադիտութեամբ չես ծածկի այն լայներայի անդունդը, վոր ընկած է «պերմանենտ հեղափոխութեան» թեորիայի և լենինիզմի միջև։

III. ԲՈՂՇԵՎԻԿՆԵՐԻ ՏԱԿՏԻԿԱՅԻ ՄԻ ՓԱՆԻ
Ս.ՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Վորպեսզի հասկանանք բոլշևիկներին՝ Հոկտեմբերի նախապատրաստման ժամանակաշրջանի տակտիկան, անհրաժեշտ է, վոր պարզենք մեզ համար այդ տակտիկայի դոնե միջանի առանձնապես կարևոր առանձնահատկութեանները։ Այդ առավել ևս անհրաժեշտ է այն պատճառով, վոր բոլշևիկներին տակտիկային վե-

րաբերող բաղձաթիվ բրոշյուրներում հաճախ չըջանցվում են հենց այդ առանձնահատկութեանները։

Այդ ի՞նչ առանձնահատկութեաններ են։

Առաջին առանձնահատկութեանը։ Յեթե լսես ընկ. Տրոցկուն, կարելի չէ կարծել, թե Հոկտեմբերի նախապատրաստման պատմութեանն ունի ընդամենը յերկու ժամանակաշրջան—հետախուզման ժամանակաշրջան և ապստամբութեան ժամանակաշրջան, իսկ ինչ դրանից ավելի չէ, այն ի չարեն է։ Ի՞նչ բան է 1917 թվի ապրիլյան մանիֆեստացիան։ «Ապրիլյան մանիֆեստացիան, վորն ավելի «ձախ» ընթացավ, քան հարկն էր, մի հետախուզական արտելք էր՝ ստուգելու համար մասսաների տրամադրութեանն ու փոխհարաբերութեանները նրանց ու խորհրդային մեծամասնութեան միջև» (տե՛ս ընկ. Տրոցկու Յեթիերի Կ. III, մ. 1, էջ XXVII)։ Իսկ ի՞նչ բան է 1917 թվի հուլիսյան ցույցը։ Ընկ. Տրոցկու կարծիքով՝ «բառ ելութեան այս անգամ էլ դործը հանդեց նոր, ավելի լայն հետախուզութեան՝ շարժման նոր, ավելի բարձր ետապում» (տե՛ս նույն տեղը, էջ XXXII)։ Ինչ ասել կուզի, վոր 1917 թվի հունիսյան ցույցը, վոր սարքվեց մեր կուսակցութեան պահանջով, ըստ ընկ. Տրոցկու պատկերացման՝ առավել ևս պետք է կոչվի «հետախուզութեան»։

Այսպիսով՝ դուրս է դալիս, վոր բոլշևիկներն արդեն 1917 թվականի մարտին ունեյին պատրաստի քաղաքական բանակ՝ բաղկացած բանվորներից ու դյուղացիներից, և յեթե այդ նրանք դործի չեյին դնում ապստամբութեան համար վո՛չ ապրիլին, վո՛չ հունիսին, վո՛չ էլ հուլիսին, այլ դառվում էյին լուկ «հետախուզու-

թշամբ», ապա այդ այն պատճառով, և միմիայն այն պատճառով էր, վոր «հետախուզութեան տվյալներն» այն ժամանակ նպաստավոր «ցուցմունքներ» չէյին տալիս:

Ինչ ասել կուզի, վոր մեր կուսակցութեան քաղաքական տակտիկայի այս պարզեցված պատկերացումը վոչ այլ ինչ է, բայց յեթե սովորական ռազմական տակտիկայի չփոխումը բուլշևիկներին հեղափոխական տակտիկայի հետ:

Իրապես այդ բոլոր ցույցերն, ամենից առաջ, արդյունք էյին մասսաների տարերային ճնշման, արդյունք էյին մասսաների բուն կերպով փողոց ձգտող զայրույթի ընդդեմ պատերազմի:

Իրապես կուսակցութեան դերն այստեղ հանդում էր մասսաների տարերայնորեն ծագող յեղութիւնների ձևավորմանն ու ղեկավարմանը՝ բուլշևիկներին հեղափոխական լողունները դժով:

Բուլշևիկներն իրապես չունեյին, և 1917 թվի մարտին չէյին ել կարող ունենալ, քաղաքական պատրաստի բանակ: Բուլշևիկները միայն ստեղծում էյին այդպիսի բանակ (և այն, վերջապես, ստեղծեցին մինչև 1917 թվի հոկտեմբերը) դասակարգերի կալի ու ընդհարումների ընթացքում՝ 1917 թվի ապրիլից մինչև հոկտեմբերը, ստեղծում էյին այն թե՛ ապրիլյան մանիֆեստացիայի միջոցով, թե՛ հունիսյան ու հուլիսյան ցույցերի միջոցով, թե՛ շրջանային ու համաքաղաքային դումաների ընտրութիւնների միջոցով, թե՛ կորնիլովչիկայի դեմ պայքարելու միջոցով, թե՛ խորհուրդները նվաճելու միջոցով: Քաղաքական բանակն այն չէ, ինչ վոր ռազմական բանակն է: Յեթե զինվո-

րական հրամանատարութիւնը պատերազմի յե դիմում՝ ձեռքին արդեն պատրաստի բանակ ունենալով, ապա կուսակցութիւնն ստիպված է իր բանակն ստեղծել բուն իսկ պայքարի ընթացքում, դասակարգերի ընդհարումների ընթացքում, այն չափով, ինչ չափով իրենք մասսաները սեփական փորձով համոզվում են կուսակցութեան լողուններին ճշտութեամբ, նրա քաղաքականութեան ճշտութեամբ:

Իհարկէ, ամեն մի այդպիսի ցույց դրա հետ մեկտեղ տալիս էր աչքից թաքնված ուժերի հարաբերակցութիւնների փորձ լուսարանում, վորոչ հետախուզում, բայց հետախուզութիւնն այստեղ վո՛չ թե ցույցի շարժառիթն էր, այլ նրա բնական հետևանքը:

Վերլուծելով հոկտեմբերի ապստամբութեան նախորդէյն յեղած անցքերը ու դրանք համեմատելով ապրիլ—հուլիսի անցքերի հետ՝ Անինն ասում է.

«Բանը հենց այնպես չէ, ինչպես էր ապրիլի 20—21-ից, հունիսի 9-ից, հուլիսի 3-ից առաջ, վորովհետև այն ժամանակ տարերային հազում էր, վորը մենք վորպես կուսակցութեան կա՛մ չէյինք ըմբռնում (ապրիլի 20-ին), կա՛մ հետ էյինք պահում ու ձեւավորում իբրև խաղաղ ցույց (հունիսի 9-ին և հուլիսի 3-ին): Վորովհետև այն ժամանակ մենք լավ դիտեյինք, վոր խորհուրդները դեռևս մեզը չեն, վոր դուրապեյինք դեռևս հալածում են լիբերալ-չեքոմիսյան ուղուն և վո՛չ թե բուլշևիկյան ուղուն (ապստամբութեանը), վոր, հետևաբար, ժողովրդի մեծամասնութիւնը մեր կողմը լինել չի կարող, վոր, հետևաբար, ապստամբութիւնը վաղամամ է» («ՌՍ Կ. XXI, էջ 345»):

Պարզ է, վոր միմիայն «հետախուզութեամբ» հետևելու չէս կարող:

Բանը, ակնհեռաբար, «հետախուզութիւնը» չէ, այլ այն, վոր

1) Հոկտեմբերի նախապատրաստման ամբողջ ժամանակաշրջանում կուսակցությունն իր պայքարի մեջ անչեզոք են հենվում եր մասսայական հեղափոխական շարժման տարերային վերելքի վրա:

2) հենվելով տարերային վերելքի վրա՝ նա իր ձեռքին եր պահում շարժման անբաժան դեկավարությունը:

3) շարժման այդպիսի դեկավարությունը նրա համար հեշտացնում եր մասսայական քաղաքական բանակը կազմավորելու գործը Հոկտեմբերյան ապստամբություն համար:

4) այդպիսի քաղաքականությունը չեր կարող չհասցնել այն բանին, վոր Հոկտեմբերի ամբողջ նախապատրաստումն անցավ մի կուսակցության, բոլշևիկների կուսակցության դեկավարությունը:

5) Հոկտեմբերի այդպիսի նախապատրաստումն, իր հերթին, հասցրեց այն բանին, վոր Հոկտեմբերյան ապստամբության հետևանքով իշխանությունը զանվեց մի կուսակցության, բոլշևիկների կուսակցության ձեռքին:

Այսպես, ուրեմն, մի կուսակցության, կոմունիստների կուսակցության անբաժան դեկավարությունը, վորպես Հոկտեմբերի նախապատրաստման հիմնական մոմենտ, — այս ե Հոկտեմբերյան հեղափոխության բնորոշ դիժը, այս ե բոլշևիկների տակտիկայի առաջին առանձնահատկությունը Հոկտեմբերի նախապատրաստման ժամանակաշրջանում:

Հաղիվ թե հարկ կա ապացուցելու, վոր առանց բոլշևիկների տակտիկայի այս առանձնահատկության՝ պրոլետարիատի դիկտատուրայի հաղթությունն իմպերիալիզմի պայմաններում անհնարին կլիներ:

Հոկտեմբերյան հեղափոխությունը սրանով չահեկանորեն տարբերվում ե 1871 թվին Ֆրանսիայում յեղած հեղափոխությունից, վորտեղ հեղափոխության դեկավարությունը բաժանում եյին իրենց միջև յերկու կուսակցություններ, վորեցից վոչ մեկին կոմունիստական կուսակցությունն չի կարելի անվանել:

Յերկրորդ առանձնահատկություն: Հոկտեմբերի նախապատրաստությունն այսպիսով ընթանում եր մի կուսակցության, բոլշևիկների կուսակցության, դեկավարության ներքո: Իայց կուսակցությունն ի՞նչպես եր տանում այդ դեկավարությունը, ի՞նչ դժով եր ընթանում այն: Այդ դեկավարությունն ընթանում եր համաձայնողական կուսակցությունների, վորպես հեղափոխության հանդուցարուծման (развязка) ժամանակաշրջանի ամենավաճառվոր խմբավորումների, մեկուսացման դժով, ես-երևերի ու մեկուսացման դժով:

Վորն ե ընթանիզմի հիմնական ստրատեգիական կանոնը:

Դա ընդունումն ե այն բանի, վոր

1) հեղափոխության թշնամիների ամենից ավելի վտանգավոր սոցիալական հենարանը մտտեցող հեղափոխական հանդուցարուծման ժամանակաշրջանում ես-վաճայնողական կուսակցություններն են:

2) թշնամուն (ցարիզմը կամ բուրժուազիային) անհնարին ե տապալել առանց այդ կուսակցությունների մեկուսացման:

3) հեղափոխության նախապատրաստման ժամանակաշրջանում գլխավոր նետերն, ույդ դատձառով, պետք ե ուղղվեն այդ կուսակցություններին մեկուսացնելու

կողմը, աշխատավորների լայն մասսաներին նրանցից կտրելու կողմը:

Յարիզմի դեմ ուղղված պայքարի ժամանակաշրջանում, բուրժուազեմոկրատական հեղափոխութեան նախապատրաստման ժամանակաշրջանում (1905—1916) ցարիզմի ամենից ավելի վտանգավոր սոցիալական հեղափոխությունները լիբերալ-միապետական կուսակցութեանն են, կադետների կուսակցութեանը: Ինչո՞ւ: Այն պատճառով, վոր նա համաձայնողական կուսակցութեանն են, ցարիզմի և ժողովրդի մեծամասնութեան, այսինքն ամբողջութեամբ առած գյուղացիութեան միջև համաձայնություն կայացնելու կուսակցութեան: Բնական է, վոր կուսակցութեանն այն ժամանակ գլխավոր հարվածներն ուղղում են կադետներին դեմ, վորովհետև, կադետներին չմեկուսացնելով՝ չեն կարելի հուսալ, կադետներին չմեկուսացնելով՝ չեն կարելի հուսալ, վոր գյուղացիութեանը կխցի իր կապերը ցարիզմից, իսկ այդ խզումը չապահովելով՝ չեն կարելի հուսալ ղեկ հեղափոխութեան հաղթութեան վրա: Այն ժամանակ շատերը չեն ին հասկանում բուլժեիկյան ստրատեգիայի այս առանձնատեսի կուսակցութեանը և բուլժեիկյան ստրատեգիայի մեղադրում են այն ավելորդ «կադետակերութեան» մեջ, պնդելով, վոր կադետների դեմ ուղղված պայքարը բուլժեիկյան «աչքից ծածկում են» պայքարն ընդդեմ գլխավոր թշնամու, ընդդեմ ցարիզմի: Բայց այդ մեղադրանքները, իրենց վտարի տակ հող չունենալով, մեղադրանքում են ին բուլժեիկյան ստրատեգիան ուղղակի չքմբռնելը, — ստրատեգիա, վորը համաձայնողական կուսակցութեան մեկուսացում են պահանջում նրա համար, վոր հեշտացնի, մոտեցնի հաղթութեանը գլխավոր թշնամու նկատմամբ:

Հաղիվ թե հարկ կա սարացուցելու, վոր առանց այդպիսի ստրատեգիայի՝ պրոլետարիատի հեղեմոնիան բուրժուազեմոկրատական հեղափոխութեան մեջ անհնարին կլինեն:

Հոկտեմբերի նախապատրաստման ժամանակաշրջանում մարտնչող ուժերի ծանրութեան կենտրոնը տեղափոխվեց նոր մակարդակի վրա: Ցարն այլևս չկար: Կադետների կուսակցութեանը համաձայնողական ուժից փոխարկվեց կառավարող ուժի, իմպերիալիզմի տիրող ուժի: Պայքարն ընթանում են արդեն վո՛չ թե ցարիզմի ու ժողովրդի միջև, այլ բուրժուազիայի ու պրոլետարիատի միջև: Այդ ժամանակաշրջանում իմպերիալիզմի ամենից ավելի վտանգավոր սոցիալական հեղափոխական հանդիսանում են ին մանր-բուրժուական դեմոկրատական կուսակցութեանները, ես-երների ու մենչևիկների կուսակցութեանները: Ինչո՞ւ: Այն պատճառով, վոր այդ կուսակցութեաններն այն ժամանակ համաձայնողական կուսակցութեաններ են ին, իմպերիալիզմի ու աշխատավոր մասսաների միջև համաձայնություն կայացնելու կուսակցութեաններ: Բնական է, վոր բուլժեիկյան գլխավոր հարվածներն այն ժամանակ ուղղվում են ին այդ կուսակցութեաններին դեմ, վորովհետև առանց այդ կուսակցութեաններին մեկուսացման չեն կարելի հուսալ, թե աշխատավոր մասսաները կխցեն իրենց կապերն իմպերիալիզմից, իսկ առանց այդ խզումն ապահովելու չեն կարելի հուսալ ղեկ խորհրդային հեղափոխութեան հաղթութեան վրա: Այն ժամանակ շատերը չեն ին հասկանում բուլժեիկյան տակտիկայի այս առանձնատեսի կուսակցութեանը, բուլժեիկյան ստրատեգիայի այն բանում, վոր նրանք «ավելորդ ատելութեան» են

տածում զեպի ես-երներն ու մենչելիկները և «մուս-
նում են» գլխավոր նպատակը: Բայց Հոկտեմբերի նա-
խապատրաստման ամբողջ ժամանակաշրջանը պերճա-
խոս կերպով այն է ասում, վոր միայն այդպիսի ասու-
միկայով բողբեկները կարող եյին ապահովել Հոկ-
տեմբերյան հեղափոխութեան հաղթութիւնը:

Այս ժամանակաշրջանի բնորոշ գիծը գյուղացիու-
թեան աշխատավոր մասսաների հետագա հեղափոխա-
կանացումն է, նրանց հիասթափումը ես-երներից ու
մենչելիկներից, նրանց հետամանն այդ կուսակցութիւն-
ներից, նրանց չըջադարձը զեպի ուղղակի համախմբու-
մը պրոլետարիատի շուրջը, վորպէս միակ մինչև վեր-
ջը հեղափոխական ուժի, վորն ընդունակ է յերկիրը
հաշտութեան հասցնելու: Այս ժամանակաշրջանի պատ-
մութիւնը մի կողմից՝ ես-երների ու մենչելիկների և
մյուս կողմից՝ բողբեկների միջև մղվող պայքարի
պատմութիւնն է, պայքար գյուղացիութեան աշ-
խատավոր մասսաների համար, այդ մասսաներին
տիրանալու համար: Այդ պայքարի բախտը վճռե-
ցին կոալիցիոն ժամանակաշրջանը, կերենչչինայի
ժամանակաշրջանը, ես-երների ու մենչելիկների հրա-
ժարվելը կարվածատիրական հողի կոնֆիսկացիայից,
ես-երների ու մենչելիկների պայքարը պատերազ-
մը շարունակելու համար, հունիսյան հարձակումը
Փրոնտում, զինվորների համար սահմանված մահապա-
տիժը, կորնիլովյան ապստամբութիւնը: Յե՛վ այդ
բախտը նրանք վճռեցին բացառապէս բողբեկյան
սարատեղիայի ոգովն: Վորովհետև առանց ես-երների
ու մենչելիկների մեկուսացման անհնարին եր տապալել
խմբերիախմբի կառավարութիւնը, իսկ առանց

այդ կառավարութեան տապալման անհնարին եր պա-
տերազմից դուրս պրծնել: Ես-երներին ու մենչելիկնե-
րին մեկուսացնելու քաղաքականութիւնը միակ ճիշտ
քաղաքականութիւնը դուրս յեկալ:

Այսպէս, ուրեմն, մենչելիկների ու ես-երների կու-
սակցութիւնների մեկուսացումը վորպէս Հոկտեմբերի
նախապատրաստման դործի ղեկավարութեան հիմնական
գիծ, — այս է բողբեկների տակտիկայի յերկրորդ ա-
ռանձնահատկութիւնը:

Հաղիվ թէ հարկ կա ապացուցելու, վոր առանց բու-
չելիկները տակտիկայի այս առանձնահատկութեան՝
բանվոր դասակարգի ու գյուղացիութեան աշխատավոր
մասսաների դաշինքն ողի մեջ կախված կմնար:

Բնորոշ է, վոր բողբեկների տակտիկայի այս ա-
ռանձնահատկութեան մասին ընկ. Տրոցկին վռչինչ,
կամ գրեթէ վռչինչ չէ ասում իր «Հոկտեմբերի դասե-
րը» գրվածքում:

Յերբորդ առանձնահատկութիւն: Հոկտեմբերի նա-
խապատրաստման դործի ղեկավարումը կուսակցու-
թեան կողմից, այսպիսով, ընթանում եր ես-երների ու
մենչելիկների կուսակցութիւնների մեկուսացման դժուր,
բանվորների ու գյուղացիների լայն մասսաները նրան-
ցից կտրելու դժուր: Բայց կուսակցութիւնն ի՞նչպէս
եր իրականացնում այդ մեկուսացումը կոնկրետ կեր-
պով, ի՞նչ ձևով, ի՞նչ լողունով: Դա իրականացվում
էր մասսաների հեղափոխական շարժման ձևով հա-
նուն խորհուրդների իշխանութեան, «ամբողջ իշխանու-
թիւնը խորհուրդներին» լողունով, խորհուրդները
մասսաների մորիլիցացիայի օրդաններին՝ ապստամ-
բութեան օրդանները, իշխանութեան օրդանները, նոր

պրոլետարական պետականութեան ասպարատի փոխար-
կելու համար պայքար մղելու միջոցով:

Ինչո՞ւ բոլշևիկները կառչեցին հատկապէս իւր-
հաւրդներին, վերպէս հիմնական կազմակերպական ըծա-
կի, վորը կարող է հեշտացնել մենչելիկներէ աւ ես-
երներէ մեկուսացման դործը, ընդունակ է առաջ շար-
ժելու պրոլետարական հեղափոխութեան դործը և կոչ-
ված է աշխատավորութեան միլիոնավոր մասնաներին
հասցնելու պրոլետարատի դիկտատուրայի հասց-
թեանը:

Ի՞նչ են խորհուրդները:

«խորհուրդները, —ասում էր Լենինը դեռևս 1917 թի սեպ-
տեմբերին, —նոր պետական սպարառ են, վորը աւելի է, նախ՝
բանվորների ու գյուղացիների զինված ուժը, ընդ վորում այդ
ուժը կտրված չէ ժողովրդից, ինչպէս հին մշտական բանակի
ուժն էր, այլ ամենասերտ կերպով կաղված է նրա հետ. ուղ-
մական տեսակետից այդ ուժն անհամեմատ աւելի հզոր է,
քան նախկինները. հեղափոխական տեսակետից նա չի կարող
փոխարինվել վոչ մի ուրիշ բանով: Յերկրորդ՝ այդ սպարառը աւ-
լիս է այնքան սերտ, անխզելի, հեշտ ստուգելի ու վերանորո-
դելի կապ մասսաների հետ, ժողովրդի մեծամասնութեան հետ,
վոր նախկին տեսական սպարառում վոչ մի այսպիսի բանի
նշաւլ անգամ չկա: Յերրորդ՝ այս սպարառը — շնորհիվ այն բա-
նի, վոր նրա կազմը ժողովրդի կամքով, առանց բյուրոկրատա-
կան ձեւականութիւնների ընտրոյի ու փոփոխելի յի — շատ
աւելի ղեմակրատական է, քան նախկին սպարառները: Չորրորդ՝
նա ամուր կազ է հաստատում ամենաբազմազան պրոֆեսիաների
հետ, դրանով հեշտացնելով ամենախոր բնույթի տարբերազոյն
ոեֆորմների դործը՝ առանց բյուրոկրատիայի: Հինգերորդ՝ նա
աւելի է ավանդարդի, այսինքն ճնշված դասակարգերի՝ բան-
վորների ու գյուղացիների՝ ամենադիկտատի, ամենայնառնուն,
առաջավոր մասի կազմակերպման ձեւը, այդպիսով հանդիսանալով
մի սպարառ, վորի միջոցով ճնշված դասակարգերի ավանդա-
րը կտրող է բարձրացնել, դաստիարակել, սովորեցնել և իր հե-

տեղից առնել այդ դասակարգերի ամբողջ վիթխարի մասամ,
վորը մինչև այժմ բոլորովին դուրս է կանգնած յեղև քաղաքա-
կան կյանքից, դուրս՝ պատմութեանից: Վեցերորդ՝ նա հնարա-
վորութեան է աւելի տալով ամենաբազմազան ուղևանները միացնելու
անմիջական և ուղղակի ղեմակրատիայի ողևանների հետ, այ-
սինքն՝ ի դեմս ժողովրդի ընտրովի ներկայացուցչների միաց-
նելու թե՛ որեւոր Ֆունկցիոն, թե՛ որեւոր Բեթի կառարումը:
Յուրժուական շարժմանտարիզի հետ համեմատած՝ սա դեմո-
կրատիայի դարգացման մեջ այնպիսի մի քայլ է դեպի առաջ,
վորը համաշխարհային-պատմական նշանակութեան ունի... Յե-
թե հեղափոխական դասակարգերի ժողովրդական տեղծադր-
ժութեանը խորհուրդներ չտեղծեր, այս պրոլետարական հեղա-
փոխութեանը Ռուսաստանում անհուսալի դործ կլիներ, վորով-
հետև պրոլետարատը հին սպարառով, անտարակույս, իշխա-
նութեան իր ձեռքին պահել չէր կարող, իսկ նոր սպարառ մեկ
անգամից տեղծել չի կարելի» (տե՛ս հ. XXI, էջ 258—259):

Ահա թե ինչու բոլշևիկները կառչեցին խորհուրդնե-
րին, վորպէս հիմնական կազմակերպական ողակի, վո-
րը կարող է հեշտացնել Հոկտեմբերյան հեղափոխու-
թեան կազմակերպումը և պրոլետարական պետականու-
թեան նոր հոսիլու սպարատի տեղծումը:

«Ամբողջ իշխանութեանը խորհուրդներին» լողունդն
իր ներքին դարգացման տեսակետից անցել է յերկու
ստադիա — առաջին (մինչև բոլշևիկների հուլիսյան
պարտութեանը, յերկրիշխանութեան ժամանակ) և յերկ-
րորդ (կորնիլովյան սպարառութեան պարտութեան
նից հետո):

Առաջին ստադիայում այդ լողունդը նշանակում էր
մենչելիկներէ ու ես-երներէ բլոկի խզում կաղևաններից,
խորհրդային կառավարութեան կազմավորում մենչելի-
կներից աւ ես-երներից (վորովհետև խորհուրդներն այդ

Ժամանակ ես-եր-մենչևիկյան եյին), ազատ ազխտացի-
ցիայի իրավունք ուղղիցիայի համար (այսինքն՝ բու-
չևիկները համար) և կուսակցութունները ազատ պայ-
քար խորհուրդները ներսում այն հաշվով, վոր այդպի-
սի պայքարի միջոցով բուչևիկներին կհաջողվի նվա-
ճել խորհուրդները և հեղափոխության խաղաղ զար-
գացման կարգով փոխոխել խորհուրդային կառավարու-
թյան վրա՞րը: Այս պլանն, իհարկե, պրոլետարիատի
գլխատուրա չէր նշանակում: Բայց նա անտարակույս
հեշտացնում էր այնպիսի պայմանների նախապատրաս-
տումը, վորոնք անհրաժեշտ են գլխատուրան ապահո-
վելու համար, վորովհետև նա, իշխանության գլուխ
կանգնեցնելով մենչևիկներին ու ես-երներին և հարկա-
դրելով նրանց իրապես անցկացնելու իրենց անտիհեղա-
փոխական պլատֆորմը, արագացնում էր այդ հուսակ-
ցութունների իսկախան բնության մերկացումը, արա-
գացնում էր նրանց մեկուսացումը, նրանց կտրվելը մաս-
սաններից: Մակայն բուչևիկների հուլիսյան պարտու-
թյունն ընդհատեց այդ զարգացումը՝ գերակշռու-
թյուն տալով գեներալական-կադետական հակահեղա-
փոխությանը և ես-եր-մենչևիկներին վերջինիս գիրկը
նետելով: Այս հանգամանքը հարկադրեց կուսակցու-
թյանը ժամանակավորապես հերթից հանելու «ամբողջ
իշխանությունը խորհուրդներին» լողունդն այն հաշ-
վով, վորպեսզի այդ լողունդը նորից առաջադրի հեղա-
փոխության նոր վերելքի պայմաններում:

Կորնիլովյան ապստամբության պարտությունը բացեց
յերկրորդ ստադիան: «Ամբողջ իշխանությունը խոր-
հուրդներին» լողունդը նորից հերթի գրվեց: Բայց այժմ
այս լողունդն արդեն այն չէր նշանակում, ինչ առաջին

ստադիայում: Նրա բովանդակությունն արժատապես
փոխվեց: Այժմ այս լողունդը նշանակում էր կապերի
լիակատար խզումն իմպերիալիզմից և իշխանության
անցումն բուչևիկներին, վորովհետև խորհուրդներն
իրենց մեծամասնությամբ արդեն բուչևիկյան էին:
Այժմ այս լողունդը նշանակում էր հեղափոխության
ուղղակի մերձեցում պրոլետարիատի գլխատուրային՝
ապստամբության միջոցով: Դեռ ավելին. այժմ այս
լողունդը նշանակում էր պրոլետարիատի գլխատու-
րայի կազմակերպում ու պետական ձևավորում:

Խորհուրդները պետական իշխանության որդանների
վերածելու տակտիկայի անդնահատելի նշանակությունն
այն էր, վոր նա աշխատավորների միլիոնավոր մաս-
սաններին պոկում էր իմպերիալիզմից, պատկազերծ էր
անում վորպես իմպերիալիզմի գործիքի՝ մենչևիկների
ու ես-երների կուսակցութունները և այդ մասսաներին,
այսպես ասած՝ ուղղակի հաղորդակցությամբ մոտեց-
նում էր պրոլետարիատի գլխատուրային:

Այսպես ուրեմն խորհուրդները պետական իշխանու-
թյան որդանների վերածելու քաղաքականության,
վորպես համաձայնողական միուսակցութունների մե-
կուսացման և պրոլետարիատի գլխատուրայի հուլ-
թության կարևորագույն պայման, — այս է բուչևիկնե-
րի տակտիկայի յերրորդ առանձնահատկությունը Հոկ-
տեմբերի նախապատրաստման ժամանակաշրջանում:

Չորրորդ առանձնահատկություն: Պատկերը թերի
կլինեք, յեթե մենք չզբաղվեյինք այն հարցով, թե
բուչևիկներին ինչպես և ինչու յեր հաջողվում իրենց
կուսակցական լողունդները դարձնել միլիոնավոր մաս-
սանների համար լողունդներ, վորոնք առաջ էյին շար-

ժողով հեղափոխութեանը, — թե նրանց ինչպէս և ինչու յեր հաջողվում իրենց քաղաքականութեան ճշտութեանը համոզել բանվոր դասակարգէր վո՛չ միայն ավանդարդքին և վո՛չ միայն նրա մեծամասնութեանը, այլև ժողովըրդի մեծամասնութեանը :

Բանն այն է, վոր հեղափոխութեան հաղթութեան համար, յեթի՞ դա իսկապես ժողովրդական հեղափոխութեան է, վոր ընդգրկում է միլիոնավոր մասսաներին, — կուսակցական լողունդները սոսկ ճշտութեանը բաշխական չէ: Հեղափոխութեան հաղթանակի համար մի անհրաժեշտ պայման էլ է պահանջվում, այն է, վոր մասսաներն իրենք իրենց սեփական փորձով համոզվեն այդ լողունդների ճշտութեանը: Միայն այդ ժամանակ կուսակցութեան լողունդները դառնում են բուն իսկ մասսաների լողունդներ: Միայն այդ ժամանակ հեղափոխութեանը դառնում է իսկապես ժողովրդական հեղափոխութեան: Հոկտեմբերի նախապատրաստման ժամանակաշրջանում բոլշևիկները տակտիկայի առանձնահատկութեանները մեկն այն է, վոր այդ տակտիկան կարողանում էր ճշտութեամբ վորոշել այն ուղիներն ու շրջադարձերը, վորոնք մասսաներին բնականորեն մոտեցնում են կուսակցութեան լողունդներին, հեղափոխութեան, այսպես ասած, բուն շեմքին, այդպիսով հեշտացնելով նրանց համար այդ լողունդների ճշտութեանն իրենց սեփական փորձով զգալը, ստուգելը, ճանաչելը: Այդ կերպ ասած՝ բոլշևիկների տակտիկայի առանձնահատկութեանները մեկն այն է, վոր այդ տակտիկան կուսակցութեանը ղեկավարելը չի շփոթում մասսաներին ղեկավարելու հետ, վոր նա պարզ կերպով տեսնում է առաջին տեսակի ղեկավարման օտարբերու-

թեանը յերկրորդ տեսակի ղեկավարումից, վոր այդ տակտիկան, այդպիսով, հանդիսանում է վո՛չ միայն կուսակցութեանը ղեկավարելու, այլև աշխատավորները միլիոնավոր մասսաներին ղեկավարելու գիտութեան:

Բոլշևիկյան տակտիկայի այս առանձնահատկութեան հայտարարման ակնբախ որինակ է Սահմանադիր ժողովի դումարման ու ցրման փորձը:

Հայտնի յե՛, վոր Խորհուրդները Հանրապետութեան լողունդը բոլշևիկներն առաջադրել են դեռևս 1917 թիվի ապրիլին: Հայտնի յե, վոր Սահմանադիր ժողովը բուրժուական պատվամենա է, վորն արմատապես հակասում է Խորհուրդների Հանրապետութեան հիմունքներին: Ի՞նչպէս կարող եր պատահել, վոր բոլշևիկները, ընթանալով դեպի Խորհուրդներն՝ Հանրապետութեան, դրա հետ մեկտեղ Սահմանադիր ժողովի անհապաղ դումարում եյին պահանջում ժամանակավոր կառավարութեանից: Ի՞նչպէս կարող եր պատահել, վոր բոլշևիկները վո՛չ միայն մասնակցեցին ընտրութեաններին, այլև իրենք հրավիրեցին Սահմանադիր ժողովը: Ի՞նչպէս կարող եր պատահել, վոր աղտամբութեանից մեկ ամիս առաջ, հնից նորին անցնելու պահին, բոլշևիկները թույլատրել էյին համարում Խորհուրդները Հանրապետութեան ու Սահմանադիր ժողովի ժամանակավոր կոմբինացիայի հնարավորութեանը:

Իսկ այդ «պատահեց» այն պատճառով, վոր

1) Սահմանադիր ժողովի դադափարն ամենաթուզվորդական դադափարներից մեկն էր բնակչութեան լայն մասսաներում:

2) Սահմանադիր ժողովի անհապաղ դումարման լո-

զանդը հեշտացնում եր ժամանակավոր կառավարութ-
թյան հակահեղափոխական բնության մերկացումը.

3) Սահմանադիր ժողովի զաղափարը ժողովրդական
մասսաների աչքում պակասեցրած անելու համար անհրա-
ժեշտ եր այդ մասսաներին՝ հողի, հաշտության, խոր-
հուրդների իշխանության իրենց պահանջով հասցնել
Սահմանադիր ժողովի պատերին, այդպիսով նրանց
ընդհարելով իսկական և կենդանի Սահմանադիր
ժողովի հետ.

4) միայն այս կերպ կարելի չեր մասսաների համար
հեշտացնել Սահմանադիր ժողովի հակահեղափոխակա-
նությանը և նրա ցրման անհրաժեշտությանը սեփական
փորձով համոզվելը.

5) այս ամենը, բնականաբար, յենթադրում եր Խոր-
հուրդների Հանրապետության ու Սահմանադիր ժողո-
վի ժամանակավոր կոմբինացիայի հնարավորության,
վորպես Սահմանադիր ժողովի վերացման (ИЗЖИВА-
НО) միջոցներից մեկի, թույլատրումը.

6) այդպիսի կոմբինացիան, յեթե այն իրականաց-
վեր ամբողջ իշխանությունը խորհուրդներին անցնելու
դեպքում, կարող եր նշանակել միմիայն, վոր Սահմա-
նադիր ժողովը յենթարկվում եր խորհուրդներին, վոր
նա վերածվում եր խորհուրդների կցորդի, վոր նա ան-
հիվանդադին մահանում եր:

Հազիվ թե հարկ կա ապացուցելու, վոր առանց բու-
չեկիների այսպիսի քաղաքականության՝ Սահմանադիր
ժողովի ցրումն այդպես հարթ չեր անցնի, իսկ եռ-եր-
ների ու մենչեկիների հետադառ յելու յի՞նքն «ամբողջ
իշխանությունը Սահմանադիր ժողովին» լողանալով
այնպիսի ճայթյունով չեյին տապալվի:

«Մենք մասնակցեցինք, — առում և Լենինը, — ուստաստանյան
բուրժուական պառլամենտի՝ Սահմանադիր ժողովի ընթացումն-
ներին 1917 թվի սեպտեմբեր—նոյեմբերին: Ճի՞շտ եր մեր տակ-
տիկան, թե վոչ... Արդյո՞ք 1917 թվի սեպտեմբեր—նոյեմբերին
մենք, ուսական բուլչեկիներս, ավելի իրավունք չունեյինք, ջան
արեւմտյան վորեւ յերկրի կոմունիստները, պառլամենտարիզը
Ռուսաստանում քաղաքականապես վերացված (УЗЖИВ) համարե-
լու: Իհարկե, ունեյինք, վորովհետեւ չե՞ վոր բանն այն չի,
թե արդյոք բուրժուական պառլամենտները վաղուց, թե վաղուց
չե, ինչ դոյություն ունեն, այլ այն, թե աշխատավորների լայն
մասսաները վորքան պատրաստ են (զաղափարապես, քաղաքա-
կանապես, զործնականապես) ընդունելու խորհրդային հաս-
քակալարդը և ցրելու բուրժուա-դեմոկրատական պառլամենտը
(կամ թույլատրելու նրա ցրումը): Վոր 1917 թ. սեպտեմբեր—
նոյեմբերին Ռուսաստանում քաղաքների բանվոր զանազան
դինվորներն ու դոյուղացիները, շնորհիվ մի, շարք հասուկ պայ-
մանների, հաղվադեպորեն նախապատրաստված էյին խորհրդային
հասարակալարդն ընդունելու և ամենադեմոկրատիկ բուրժուա-
կան պառլամենտը ցրելու՝ այդ միանգամայն անվիճելի ու լիտ-
վին հաստատված պատմական փաստ է: Յեւ այնուամենայնիվ,
բուլչեկիները վա՛չ թե բոյկոտի յենթարկեցին Սահմանադիր ժո-
ղովը, այլ մասնակցեցին ընթացումն նրանցին՝ սրբութեամբ
կողմից քաղաքական իշխանությունը նվաճելուց թե՛ առաջ, թե՛
հետո» (տե՛ս հ. XXV, էջ 202—203):

Իսկ ինչո՞ւ նրանք բոյկոտի չենթարկեցին Սահմա-
նադիր ժողովը: Այն պատճառով, ասում և Լենինը,
վոր

«Խորհրդային Հանրապետության հաղթությունից նույնիսկ
միջանի շարժ թռալ, նույնիսկ այդպիսի հաղթությունից հե-
տա, բուրժուա-դեմոկրատական պառլամենտին մասնակցելը վո՛չ
միայն չի վնասում հեղափոխական տրոլեոտարիստին, այլ նրա
համար հեշտացնում և հետամնաց մասսաներին այն բանն աղա-
ցուցելու հնարավորությունը, թե ինչու այդպիսի պառլամենտ-
ներն արժանի չեն ցրման, հեշտացնում և դրանց ցրման հաղ-
ջությունը, հեշտացնում և բուրժուական պառլամենտարիզի
«քաղաքական վերացումը» (տե՛ս նույն տեղը):

Բնորոշ ե, վոր ընկ. Տրոցկին չի հասկանում բու-
չևիկյան տակտիկայի այս առանձնահատկութունը,
փոնչացնելով Սահմանադիր Ժողովը խորհուրդներին
զուգակցելու «Թեորիայի» վրա, վորպես հիլֆերդին-
գականության վրա:

Նա չի հասկանում, վոր այդպիսի զուգակցութուն
թույլ ապր—ապստամբության լողունդի և խորհուրդ-
ների հավանական հաղթության դեպքում—Սահմանա-
դիր Ժողովի դուսարման հետ կապակցված՝ միակ հե-
զափոխական տակտիկան ե, վորն ընդհանուր վոչինչ
չունի խորհուրդները Սահմանադիր Ժողովի կցորդի
վերածելու հիլֆերդինգյան տակտիկայի հետ, վոր մի
քանի ընկերների սխալն այս հարցում հիմք չի տալիս
նրան պարտավելու Լենինի ու կուսակցության միանգա-
մայն ճիշտ դիրքը «կոմբինացված պետականության»
նկատմամբ՝ վորոշ պայմանների դեպքում (համեմա-
տի՛ր հ. XXI, էջ 338):

Նա չի հասկանում, վոր առանց բուչևիկները յուրո-
րինակ քաղաքականության՝ վեր առած այդ քաղաքա-
կանությունը Սահմանադիր Ժողովի հարցի կապակցու-
թյամբ՝ նրանց չեք հաջողվի իրենց կողմը նվաճել ժո-
ղովրդի միլիոնավոր մասսաներին, իսկ այդ մասսանե-
րին չնվաճելով՝ նրանք չենին կարող Հոկտեմբերյան
ապստամբությունը ժողովրդական խոր հեղափոխու-
թյան վերածել:

Հետաքրքրական ե, վոր ընկ. Տրոցկին փոնչացնում
և նույնիսկ «ժողովուրդ», «հեղափոխական դեմոկրա-
տիա» և այլ, բուչևիկները հողվածներում պտտահող,
բառերի վրա՝ դրանք մարքսիստի համար անվայել
համարելով:

Ընկ. Տրոցկին, ակներևորեն, մոռանում ե, վոր Լե-
նինը, այդ անտարակուսելի մարքսիստը, նույնիսկ 1917
թվի սեպտեմբերին, դիկտատուրայի հաղթությունից
մի ամիս առաջ, գրել ե «ամբողջ իշխանությունը հե-
զափոխական պրոլետարիատի գլխավորած հեղափոխա-
կան դեմոկրատիայի ձեռքն անհասպող անցնելու անհրա-
ժեշտության» մասին (տե՛ս հ. XXI, էջ 198):

Ընկ. Տրոցկին, ակներևորեն, մոռանում ե, վոր Լե-
նինը, այդ անտարակուսելի մարքսիստը, Կուլեբանին
դրած Մարքսի հայտնի նամակից (1871 թվի ապրիլ)
ցիատոներ բերելով այն մասին, վոր բյուրոկրատական-
դինավորական պետական ապարատը ջարդելը նախա-
պայմանն ե կոնտրինենտի ամեն մի իսկական ժողովրդա-
կան հեղափոխության, սպիտակել վրա սեով գրում ե
հետևյալ սողերը.

«Առանձին ուշադրության արժանի չե Մարքսի չափազանց
խոր դիտողությունը, վոր բյուրոկրատական-դինավորական պետա-
կան մեքենայի խորտակումն ճամեն մի իսկական ժողովրդական
հեղափոխության նախապայմանն ե»: «Ժողովրդական» հեղափո-
խության այս հասկացողությունը տարբրնակ և թվում Մարքսի
բերանում, և ուսական պրեխանովյաններն ու մենչևիկները,
Մարսվեյի այդ հեռուսրդները, վորոնք ցանկանում են մարքսիստ
համարվել, կարող եյին, թերևս, «լիզվի սխալ» հայտարարել
Մարքսի այդպիսի արտահայտությունը: Նրանք մարքսիզմը հան-
դեցրել են ույնպիսի աղբատիկ լիբերալ սղավաղման, վոր բացի
բուրժուական և պրոլետարական հեղափոխության հակադրումից
նրանց համար վուչինչ դոյություն չունի, և այդ հակադրումն
եյ նրանք անկարելիության չափ մեռած ձևով են հասկանում...
1871 թվականի Յեկրոպայում կոնտրինենտի վսչ մի յերկրում
պրոլետարիատը ժողովրդի մեծամասնություն չեք կազմում:
«Ժողովրդական» հեղափոխությունը, վորը շարժման մեջ ե ներ-
քաշում իսկպես մեծամասնությունը, կարող եք ալդրդիսին լի-
նել, թե՛ պրոլետարիատին և թե՛ դյուրացիությանն ընդգրկելով

միայն: Այն ժամանակ հենց այդ յերկու դատարարներն էլ յին, վոր կողմում էին «ժողովուրդը»: Յերկու դատարարները միավորված են նրանով, վոր «բյուրոկրատական-դինվորական պետական մեքենան» կեղեքում, ճնշում, շահագործում և նրանց: Փշրել այդ մեքենան, կտրել այն—այս և «ժողովուրդի», նրա մեծամասնության իսկական շահը, դյուրացիները մեծամասնության ու բանվորների իսկական շահը, այս և ամենաչքավոր պաշտպանները ու պրոլետարիների ազատ դաշինքի «նախապայմանը», իսկ առանց այդպիսի դաշինքի հաստատուն չե դեմոկրատիան և անհնարին և սոցիալիստական փոխակերպությունը» (տե՛ս հ. XXI, էջ 295—296):

Լենինի այս խոսքերը չի կարելի մոռանալ:

Այսպես ուրեմն, մասսաներին հեղափոխական դիրքերին մոտեցնելու միջոցով կուսակցական լոզունգները ճշտությունը իրենց սեփական փորձով նրանց համոզել կարողանալը, վորպես միլիոնավոր աշխատավորներին կուսակցությունը կողմը նվաճելու կարևորագույն պայման, — այս և բոլշևիկները սակտիկայի չորրորդ աստիճանահատկությունը Հոկտեմբերի նախապատրաստումն ժամանակաշրջանում:

Յես կարծում եմ, վոր ասածս միանգամայն բուխական է, վորպեսզի կարողանանք պարզել մեզ համար այդ բախակիկայի բնորոշ դժերը:

IV. ՀՈԿՏԵՄԲԵՐԹԱՆ ՀԵՂԱՓՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՐՊԵՍ
ՀԱՄԱՇԵՍՐՀԱՅԻՆ ՀԵՂԱՓՈՒՆՈՒԹՅԱՆ
ՍԿԻՉԲ ՅԵՎ ՆՍԽԱՂԻՐՅԱԼ

Առաջարկույս և, վոր Յելլոպայի հիմնական յերկիրներում հեղափոխության միաժամանակյա հաղթության ունիվերսալ թեորիան, մի յերկրում սոցիալիզմի հաղթության անհնարին լինելու թեորիան արհեստա-

կան, անկենսունակ թեորիա դուրս յեկալ: Ռուսաստանի պրոլետարական հեղափոխություն յոթնամյա պատմությունը խոսում և վո՛չ թե հոգուս այդ թեորիայի, այլ նրա դեմ: Այդ թեորիան անընդունելի յե վո՛չ թե միայն վորպես համաշխարհային հեղափոխության զարգացման սխեմա, վորովհետև նա հակասում և ակններև փաստերին: Ե՛լ ասվելի նա անընդունելի յե վորպես լոզունգ, վորովհետև նա կաշկանդում և և վո՛չ թե արձակում ասանձին յերկիրների ձեռներեցությունը, վորոնք պատմական վորոշ պայմանների չնորհիվ հնարավորություն են ստանում ինքնուրույնաբար ճեղքելու կապիտալի ճակատը, վորովհետև նա խթանում և վո՛չ թե ասանձին յերկիրները ակտիվ դրոհը կապիտալի վրա, այլ հարցի «ընդհանրական հանդուցալուծման» մոմենտին պասսիվորեն սպասելը, վորովհետև ասանձին յերկիրները պրոլետարիների մեջ նա պատվաստում և վո՛չ թե հեղափոխական վճռականության վողի, այլ համբույսան տարակուսանքները վողի այն մասին, թե՛ «իսկ յեթե հանկարծ ուրիշները չաջակցեն»: Լենինը միանգամայն իրավացի յե, ասելով, վոր պրոլետարիատի հաղթությունը մի յերկրում՝ «ախլիկ դեպք և», վոր «միաժամանակյա հեղափոխությունը մի շարք յերկիրներում» կարող և միայն «հազվադյուստ բացառություն» լինել (տե՛ս հ. XXIII, էջ 354):

Իայց հեղափոխության լենինյան թեորիան չի սահմանափակվում, ինչպես հայտնի յե, դործի միայն այս կողմով: Նա դրա հետ մեկտեղ համաշխարհային հեղափոխության զարգացման թեորիան է¹: Սոցիալիզմի

¹ Յե՛ս «Լենինիզմի հիմունքների մասին» («Լենինիզմի Կարգերը» լուս. Կարգ. Կարգ.): Ի. Սա.:

Հաղթութունը մի յերկրում ինքնաբալ ինքիք չէ :
Հաղթած յերկրի հեղափոխութունն իրեն պետք է դե-
տե վճի թե վորպես ինքնաբալ մեծութուն, այլ վոր-
պես նեցուկ (подспорье), վորպես միջոց՝ պրոլետա-
րիատի հաղթութունը բոլոր յերկիրներում արագաց-
նելու համար : Վորովհետև հեղափոխության հաղթու-
թունը մի յերկրում, այլալ դեպքում Ռուսաստա-
նում, իմպերիալիզմի անհավասարաչափ զարգացման
և առաջադիմող քայքայման արդյունք չէ միայն : Նա
գրա հետ մեկտեղ համաշխարհային հեղափոխության
ակիզքն ու նախադրյալն է :

Անտարակույս է, վոր համաշխարհային հեղափոխու-
թյան զարգացման ուղիներն այնպես պարզ չեն, ինչ-
պես այդ կարող եր թվալ առաջ, մինչև հեղափոխու-
թյան հաղթութունը մի յերկրում, մինչև զարգացած
իմպերիալիզմի յերևան դալը, վորը «սոցիալիստական
հեղափոխության նախորդակն» է : Վորովհետև յերևան
է յեկել այնպիսի մի նոր դործոն, ինչպես զարգացած
իմպերիալիզմի պայմաններում դործող՝ կապիտալիստա-
կան յերկիրների անհավասարաչափ զարգացման որենքն
է, վորը խոտում է պատերազմական ընդհարումների
անխուսափելիության մասին, կապիտալի համաշխար-
հային Փրոնտի ընդհանուր թուլացման և առանձին յեր-
կիրներում սոցիալիզմի հաղթելու հնարավորության
մասին : Վորովհետև յերևան է յեկել այնպիսի մի նոր
գործոն, ինչպես Արևմուտքի և Արևելքի միջև, աշխար-
հի Փինանսական շահագործման կենտրոնի ու դադու-
թային ճնշման ասպարեղի միջև ընկած ահադին խոր-
հրդային յերկիրն է, վորը սոսկ իր գոյությամբ հե-
ղափոխականացնում է ամբողջ աշխարհը :

Այս ամենն այնպիսի գործոններ են (յես չեմ խաուսմ
ուրիշ, ավելի քիչ կարևոր գործոնների մասին), վո-
րոնք չեն կարող հաշվի չառնվել համաշխարհային հե-
ղափոխության ուղիներն ուսումնասիրելիս :

Առաջներում սովորաբար կարծում էին, վոր հեղա-
փոխութունը զարգանալու յե սոցիալիզմի տարրերի
համալստարաչափ «հասունացման» միջոցով, ամենից ա-
ռաջ ալիլի զարգացած, «առաջավոր» յերկիրներում :
Այժմ այդ պատկերացումը կարոտ է ելական փոփո-
խությունների :

«Միժմ, — սուտ է լինինք, — միջազգային հարաբերության-
ների այնպիսի սխառ է ստեղծվել, վոր Յեվրոպայում պետու-
թյուններից մեկն ստրկացված է հաղթող պետութունների կող-
մից : դա Գերմանիան է : Այս, Արևմուտքի մի շարք պետութուն-
ներ, այն էլ ամենահին պետութունները, հաղթության շնոր-
հիվ ընկել են այնպիսի պայմանների մեջ, յեր նրանք ոչ ոչ հաղ-
թությանից կարող են ոչ ոքի իրենց ճնշված դասակարգերին
մի շարք անկարևոր գիշումներ անելու համար, — գիշումներ, վո-
րոնք, այնուամենայնիվ, հետաձուլում են հեղափոխական շար-
ժումն այդ յերկիրներում և ստեղծում են զոցիալական խա-
ղաղության» վորը նմանութուն :

«Միևնույն ժամանակ մի ամբողջ շարք յերկիրներ՝ Արևել-
քը, Հնդկաստանը, Չինաստանը և այլն, հենց վերջին իմպերիա-
լիստական պատերազմի շնորհիվ, իրենց աղուրից (КОЛОЯ) վերջ-
նականապես դուրս դշվեցին : Նրանց զարգացումը վերջնականա-
պես ընթացավ համայնվորողական կապիտալիստական մասշա-
բով : Նրանց մեջ սկսվեց համայնվորողական խմորում : Յեվ ամ-
բողջ աշխարհի համար պարզ է հիմա, վոր նրանք ներքաշվել են
այնպիսի զարգացման մեջ, վորը չի կարող ամբողջ համաշխար-
հային կապիտալիզմի ճգնաժամի չհասցնել :

Դրա շնորհիվ և այդ կապակցությամբ «արևմտ-յեվրոպա-
կան կապիտալիստական յերկիրներն ավարտում են իրենց զար-
գացումը դեպի սոցիալիզմ... վճ այնպես, ինչպես մենք առաջ
էյինք բողաբում : Նրանք ավարտում են այն վճ թե սոցիալիզմի

Հավասարաչափ «հասունացումով» այդ յերկիրներում, այլ պետություններից վճարանց շահագործմամբ՝ մյուսների կողմից, իմպերիալիստական պատերազմի ժամանակ հաղթված պետություններից առաջինի շահագործմամբ, վորը միացած է ամբողջ Արևելքի շահագործման հետ: Իսկ Արևելքը, մյուս կողմից, վերջնականապես հեղափոխական շարժման մեջ է մտել հենց այդ պետությունների և հեղափոխական պատերազմի շնորհիվ և վերջնականապես ներքաշվել է համաշխարհային հեղափոխական շարժման ընդհանուր հորձանքի մեջ» (տե՛ս Կ. XXVՈ, էջ 415—416):

Յեթե որան ավելացնենք այն փաստը, վոր վո՛չ մի այն հաղթված յերկիրներն ու դադուլթներն են շահագործվում հաղթած յերկիրների կողմից, այլև հաղթած յերկիրների մի մասն ընկնում է ամենից ավելի հզոր հաղթող յերկիրներին՝ Սմերիկայի ու Անդլիայի Փինանսասական շահագործման որբերտի մեջ. վոր այդ բոլոր յերկիրների միջև յեղած հակասությունները համաշխարհային իմպերիալիզմի քայքայման կարևորագույն գործոնն են. վոր բացի այդ հակասություններից, դեռևս գոյություն ունեն ու զարգանում են ամենախորհուրդ հակասություններ այդ յերկիրներից յուրաքանչյուրի ներսում. վոր այդ բոլոր հակասությունները խորանում ու սրվում են այդ յերկիրների կողքին Սորհուրդների մեծ Հանրապետության գոյություն փաստով, — յեթե այս ամենը նկատի առնենք, ապա միջադպային դրություն հարաբերակցության պատկերն ավելի կհամարվա չափով լրիվ կըառնա:

Ամենից ավելի հավանականն այն է, վոր համաշխարհային հեղափոխությունը կզարգանա իմպերիալիստական պետությունները սխառմից մի շարք նոր յերկիրներին հեղափոխականորեն անջատվելու միջոցով՝ իմպերիալիստական պետությունների պրոլետարիատի

կողմից այդ յերկիրներին պրոլետարներին ցույց տրվող աջակցութեամբ: Մենք տեսնում ենք, վոր առաջին անջատված յերկիրն, առաջին հաղթող յերկիրն արդեն աջակցում են մյուս յերկիրներին բանվորական և առհասարակ աշխատավորական մասսաները: Առանց այդ աջակցութեան նա չէր կարող դիմանալ: Տարակույս չկա, վոր այդ աջակցությունը ուժեղանալու և ամելու յե: Բայց անտարակուսելի յե նաև այն, վոր ինքը՝ համաշխարհային հեղափոխությունը զարգացումը, իմպերիալիզմից մի շարք նոր յերկիրների անջատվելու բուն պրոցեսը տեղի յե ունենալու այնքան ավելի արագ և հիմնավոր կերպով, վորքան ավելի հիմնավոր կերպով կհամարանդվի սոցիալիզմն առաջին հաղթած յերկրում, վորքան ավելի արագ կերպով այդ յերկիրը կդառնա համաշխարհային հեղափոխություն հետագա ծավալման բազա, իմպերիալիզմի հետագա քայքայման լծակ:

Յեթե ճիշտ է այն դրույթը, թե սոցիալիզմի վերջնական հաղթությունն առաջին ազատագրված յերկրում անհնարին է ստանց միջանի յերկիրների պրոլետարների ընդհանուր ջանքերի, ապա նույնքան ճիշտ է նաև այն, վոր համաշխարհային հեղափոխությունը կծավալվի այնքան ավելի արագ ու ավելի հիմնավոր կերպով, վորքան ավելի իրական կլինի առաջին սոցիալիստական յերկրի սոցիալիզմնը մնացած բոլոր յերկիրներին բանվորական ու աշխատավորական մասսաներին:

Ինչո՞վ պետք է արտահայտվի այդ սոցիալիզմնը: Նա պետք է արտահայտվի, նախ, նրանով, վոր հաղթած յերկիրը «կիրուռի իրագործելի առավելագույն»

հավատարմացի «հասունացումով» այդ յերկիրներում, այլ պետություններից վճարող շահագործմամբ՝ մյուսների կողմից, իմպերիալիստական պատերազմի ժամանակ հաղթված պետություններից առաջինի շահագործմամբ, վրոբ միացած եւ ամբողջ Արևելքի շահագործման հետ: Իսկ Արևելքը, մյուս կողմից, վերջնականապես հեղափոխական շարժման մեջ եւ մտել հենց այդ առաջին իմպերիալիստական պատերազմի շնորհիվ եւ վերջնականապես ներքաշվել եւ համաշխարհային հեղափոխական շարժման ընդհանուր հորձանքի մեջ» (տե՛ս հ. XXVII, էջ 415—416):

Յեթե որան ավելացնենք այն փաստը, վրոբ վո՛չ միայն հաղթված յերկիրներն ու դադուլներն են շահագործվում հաղթած յերկիրների կողմից, այլև հաղթած յերկիրները մի մասն ընկնում եւ ամենից ավելի հզոր հաղթող յերկիրները՝ Սմերիկայի ու Անդլիայի Փլինանսական շահագործման որբիտի մեջ. վրոբ այդ բոլոր յերկիրները միջև յեղած հակասությունները համաշխարհային իմպերիալիզմի քայքայման կարևորագույն գործոնն են. վրոբ բացի այդ հակասություններից, դեռևս գոյություն ունեն ու զարգանում են ամենախորհակասություններ այդ յերկիրներից յուրաքանչյուրի ներքում. վրոբ այդ բոլոր հակասությունները խորանում ու սրվում են այդ յերկիրների կողքին Սորհուրդները մեծ Հանրապետության գոյություն փաստով, — յեթե այս ամենը նկատի առնենք, ապա միջադեպային դրուլթյան յուրորինակության պատկերն ավելի կհամպակաս չափով լրիվ կդառնա:

Ամենից ավելի հավանականն այն ե, վրոբ համաշխարհային հեղափոխությունը կզարգանա իմպերիալիստական պետությունների սխտեմից մի շարք նոր յերկիրները հեղափոխականորեն անջատվելու միջոցով՝ իմպերիալիստական պետությունների պրուլետարիատի

կողմից այդ յերկիրների պրուլետարներին ցույց տրվող աջակցությամբ: Մենք տեսնում ենք, վրոբ առաջին անջատված յերկիրն, առաջին հաղթող յերկիրն արդեն աջակցում են մյուս յերկիրների բանվորական եւ առհասարակ աշխատավորական մասսաները: Առանց այդ աջակցության նա չեր կարող դիմանալ: Տարակույս չկա, վրոբ այդ աջակցությունը ուժեղանալու եւ ամելու յե: Բայց անտարակուսելի յե նաև այն, վրոբ ինքը՝ համաշխարհային հեղափոխությունը դարդացումը, իմպերիալիզմից մի շարք նոր յերկիրների անջատվելու բուն պրոցեսը սեղի յե ունենալու այնքան ավելի արագ եւ հիմնավոր կերպով, վրոբան ավելի հիմնավոր կերպով կհամարսնուվի սոցիալիզմն առաջին հաղթած յերկրում, վրոբան ավելի արագ կերպով այդ յերկիրը կդառնա համաշխարհային հեղափոխություն հետագա ծավալման բազա, իմպերիալիզմի հետագա քայքայման լծակ:

Յեթե ճիշտ ե այն դրուլթը, թե սոցիալիզմի վերջնական հաղթությունն առաջին ազատագրված յերկրում անհնարին ե առանց միջանի յերկիրների պրուլետարների ընդհանուր ջանքերի, ապա նույնքան ճիշտ ե նաև այն, վրոբ համաշխարհային հեղափոխությունը կծավալվի այնքան ավելի արագ ու ավելի հիմնավոր կերպով, վրոբան ավելի իրական կլինի առաջին սոցիալիստական յերկրի ոգնությունը մնացած բոլոր յերկիրների բանվորական ու աշխատավորական մասսաներին:

Ինչո՞վ պետք ե արտահայտվի այդ ոգնությունը: Նա պետք ե արտահայտվի, նախ, նրանով, վրոբ հաղթած յերկիրը «կիրառի իրագործելի առավելագույն

նը մի յերկրում՝ զարգացնելու, աջակցելու, արթնաց-
նելու համար հեղափոխությունը բոլոր յերկիրներում»
(տե՛ս 4. XXIII, էջ 385) :

Յերկրորդ, նա պետք է արտահայտվի նրանով, վոր
մի յերկրի «հաղթած պրոլետարիատը», «էքսպրոպրի-
ացիայի յենթարկելով կապիտալիստներին ու իր յերկ-
րում սոցիալիստական արտադրություն կազմակերպե-
լով՝ ծառանա... մնացած կապիտալիստական աշխար-
հի դեմ, իր կողմը դրավելով մյուս յերկիրներին ճշն-
ված դասակարգերին, այդ յերկիրներում ապստամբու-
թյուն բարձրացնելով կապիտալիստների դեմ, անհրա-
ժեշտության դեպքում նույնիսկ ռազմական ուժով
դուրս դալով շահագործող դասակարգերի և նրանց պե-
տություններին դեմ» (տե՛ս 4. XVIII, էջ 232—233) :

Հաղթած յերկրի կողմից ցույց արվող այս ոգնու-
թյան բնորոշ առանձնահատկությունը միայն այն չէ,
վոր այդ յերկիրն արագացնում է մյուս յերկիրներին
պրոլետարների հաղթությունը, այլև այն է, վոր հեշ-
տացնելով այդ հաղթությունը, նա դրանով իսկ ապա-
հովում է սոցիալիզմի վերջնական հաղթությունն, ա-
ռաջին հաղթած յերկրում :

Ամենից ավելի հավանականն այն է, վոր համաշ-
խարհային հեղափոխության զարգացման ընթացքում,
առանձին կապիտալիստական յերկիրներում իմպերիա-
լիզմի ոջախներին և ամբողջ աշխարհում այդ յերկիր-
ների սխտեմի կողքին կստեղծվեն սոցիալիզմի ոջախ-
ներ առանձին խորհրդային յերկիրներում և այդ ոջախ-
ների սխտեմ ամբողջ աշխարհում, ընդ վորում պայ-
քարն այս յերկու սխտեմների միջև կլցնի համաշխար-
հային հեղափոխության ծավալման պատմությունը :

«Վորովհետև,—ասում է Լենինը,—անհնարին է աղբերի ա-
զատ միավորումը սոցիալիզմի մեջ՝ առանց սոցիալիստական
հանրապետությունների ավելի կամ պակաս յերկարատե, համա-
պայքարի՝ ընդդեմ հետամնաց պետությունների» (տե՛ս նույն
տեղը) :

Հոկտեմբերյան հեղափոխության համաշխարհային
նշանակությունը վոր՛չ միայն այն է, վոր նա հանդի-
սանում է մի յերկրի մեծ նախաձեռնությունն իմպե-
րիալիզմի սխտեմի ճեղքման դործում և սոցիալիզմի
առաջին ոջախը կապիտալիստական յերկիրներին ուղի-
անոտում, այլև այն, վոր նա կազմում է համաշխար-
հային հեղափոխության առաջին ետապը և նրա հետա-
դա ծավալման հզոր բազան :

Այս պատճառով՝ իրավացի չեն վոր՛չ միայն նրանք,
վորոնք մոռանալով Հոկտեմբերյան հեղափոխության
միջազգային բնույթը՝ հեղափոխության հաղթությու-
նը մի յերկրում հայտարարում են զուտ աղբային և
միայն աղբային յերևույթ : Իրավացի չեն նաև նրանք,
վորոնք հիշելով Հոկտեմբերյան հեղափոխության մի-
ջազգային բնույթը՝ հակամեծ են այդ հեղափոխու-
թյունը դիտելու վորպես ինչ-վոր պասսիվ բան, վորը
կոչված է լուրջ աջակցություն ընդունելու դրսից : Իրա-
պես վոր՛չ միայն Հոկտեմբերյան հեղափոխությունն է
կարող մյուս յերկիրներին հեղափոխության աջակցու-
թյանը, այլև այդ յերկիրներին հեղափոխությունն է
կարող Հոկտեմբերյան հեղափոխության աջակցությա-
նը, վորպեսզի արագացնի և առաջ շարժի համաշխար-
հային իմպերիալիզմի տապալման դործը :

1924 թ. դեկտեմբերի
17-ին :

Տպագրվում է ըստ «Լենինիզմի
հարցերը» գրքի 100-103 էջերի
տեքստի, Հայկուսիք, 1985 թ. :

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈՆՈՒԹՅԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԸ

Հոկտեմբերի քառամյակի առթիվ



Հսկանեմբերյան հեղափոխութիւնն «ազգային շրջանակներով» հեղափոխութիւնն չէ միայն: Նա, ամենից առաջ, խնտերնացիօնալ, համաշխարհային կարգի հեղափոխութիւնն է, վորովհետեւ նա մարդկութեան համաշխարհային պատմութեան մեջ արմատական շրջադարձ է նշանակում՝ հին, կապիտալիստական աշխարհից դեպի նոր, սոցիալիստական աշխարհը:

Հեղափոխութիւններն անցյալում սովորաբար նրանով էին վերջանում, վոր շահագործողների մի խումբ կառավարման դեկի մոտ փոխվում եր շահագործողների մի այլ խմբով: Շահագործողները փոխվում էին, շահագործումը՝ մնում: Այսպես է յեղել բանը ստրուկների ազատագրական շարժումների ժամանակ: Այսպես է յեղել բանը ճորտերի ապստամբութիւնների շրջանում: Այսպես է յեղել բանը հայտնի «մեծ» հեղափոխութիւնների շրջանում Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում: Յես չեմ խոսում ֆարլդի կոմունայի մասին, վորը յեղել է պրոլետարիատի առաջին, փառասանծ, հերոսական, բայց և այնպես անհաջող փորձը՝ պատմութիւնը կապիտալիզմի դեմ դարձնելու:

Հսկանեմբերյան հեղափոխութիւնն այդ հեղափոխութիւններից սկզբունքորեն է տարբերվում: Նա իրեն նպատակ է դնում մի՛չ թէ շահագործման մի ձևը շահագործման մի այլ ձևով, շահագործողների մի խումբը

չահազործողներէ մի այլ իմբոյլ փոխարինելը, այլ մարդու կողմից մարդու ամեն մի շահազործում վոչընչացնելը, բոլոր և ամեն տեսակի շահազործողական իմբերը վոչնչացնելը, պրոլետարիատի դիկտատուրա հաստատելը, մինչև այժմ գոյութիւն ունեցած ճնշված բոլոր դասակարգերից ամենահեղափոխական դասակարգի իշխանութիւնը հաստատելը, սոցիալիստական անդամակարգը նոր հասարակութիւն կազմակերպելը:

Հենց այս պատճառով ել Հոկտեմբերյան հեղափոխութեան հարթութիւնն արմատական բեկում է նշանակում մարդկութեան պատմութեան մեջ, արմատական բեկում՝ համաշխարհային կապիտալիզմի պատմական ճակատադրում, արմատական բեկում՝ համաշխարհային պրոլետարիատի ազատադրական շարժման մեջ, արմատական բեկում՝ ամբողջ աշխարհի շահազործվող մասսաների պայքարի յեղանակների ու կազմակերպման ձևերի մեջ, կենցաղում ու արագիցիաներում, կուլտուրայի ու դադարախախտութեան մեջ:

Սրանումն է այն բանի հիմունքը, վոր Հոկտեմբերյան հեղափոխութեանն ինտերնացիոնալ, համաշխարհային կարգի հեղափոխութեանն է:

Սրանումն է նույնպես այն խորը համակրանքի արմատը, վոր սաժում են դեպի Հոկտեմբերյան հեղափոխութեանը բոլոր յերկիրների ճնշված դասակարգերը՝ նրա մեջ տեսնելով իրենց ազատադրման դրամականը:

Կարելի կլիներ նշել մի շարք հիմնական հարցեր, վորոնց դժով ընթանում է Հոկտեմբերյան հեղափոխութեան ներգործութեանը հեղափոխական շարժման զարգացման վրա ամբողջ աշխարհում:

1. Հոկտեմբերյան հեղափոխութեանը, ամենից ա-

ստաջ, նրանով ինչանապօր, վորն ա ճեղքեց համաշխարհային իմպերիալիզմի ճակատը, տապալեց իմպերիալիստական բուրժուազիային կապիտալիստական ամենաամեն յերկիրներից մեկում և իշխանութեան դուրս կանդնեցրեց սոցիալիստական պրոլետարիատին:

Վարձվողների դասակարգը, հարածվածների դասակարգը, ճնշվածների ու շահազործվողների դասակարգը մարդկութեան պատմութեան մեջ առաջին անգամ բարձրացավ մինչև իշխող դասակարգի դրութուն՝ իր դրինակով վարակելով բոլոր յերկիրների պրոլետարներին:

Մա նշանակում է, վոր Հոկտեմբերյան հեղափոխութեանը բաց արեց իմպերիալիզմի յերկիրներում նոր դարաշրջան, պրոլետարական հեղափոխութեանների դարաշրջանը:

Հոկտեմբերյան հեղափոխութեանը կալվածատերերի ու կապիտալիստների ձեռքից վերցրեց արտադրութեան գործիքներն ու միջոցները և դարձրեց հասարակական սեփականութեան՝ հակադրելով, այսպիսով, բուրժուական սեփականութեանը սոցիալիստական սեփականութեանը: Հենց սրանով ել նա մերկացրեց կապիտալիստների սուտն այն մասին, թե բուրժուական սեփականութեանն անձեռնմխելի, սրբազան, հայխոնեատկան է:

Նա խլեց բուրժուազիայից իշխանութեանը, զրկեց բուրժուազիային քաղաքական իրավունքներից, կործանեց բուրժուական պետական ապարատը և հանձնեց իշխանութեանը խորհուրդներին, այսպիսով, բուրժուական պառլամենտարիզմին՝ վորպես կապիտալիստական դեմոկրատիայի՝ հակադրելով խորհուրդների-

սոցիալիստական իշխանութիւնը՝ ժողովեա պրօլետարատ-
կան զեմոկրատիա: Լաֆարդն իրավացի յեր, յերբ նա
գեղեւս 1887 թ. ասում եր, թե հեղափոխութեան հենց
հետեւյալ որը «նախկին բոլոր կապիտալիստները կըլըրկ-
վին ընտրական իրավունքներէց»: Հոկտեմբերյան հե-
ղափոխութիւնը հենց սրանով մերկացրեց սոցիալ-դե-
մոկրատներէ սուսն աչն մասին, թե աշտմ հնարավոր
ե խաղաղ անցումը սոցիալիզմին բուրժուական պատլա-
մենտարիզմի միջոցով:

Բայց Հոկտեմբերյան հեղափոխութիւնը կանգ չա-
ռավ և չեր ել կարող կանգ առնել սրա վրա: Քանզե-
յով հինը, բուրժուականը, նա ձեռնամուխ յեղավ կա-
ռուցելու նորը, սոցիալիստականը: Հոկտեմբերյան հե-
ղափոխութեան տասը տարին՝ կուսակցութեան, արհ-
միութիւններէ, խորհուրդներէ, կոոպերացիայի, կուլ-
տուբական կազմակերպութիւններէ, տրանսպորտի,
արդյունաբերութեան, կարմիր բանակի կառուցման
տասը տարին ե: ԽՍՀՄ-ի մեջ շինարարութեան ճակա-
տում սոցիալիզմի ունեցած անկասկածելի հաջողու-
թիւններն ակնբախորեն ցույց տվին, վոր պրոլետար-
իատը կարող ե հաջողութեամբ յերկիր կառավարել՝
առանց բուրժուազիայի և ընդդեմ բուրժուազիայի, վոր
նա կարող ե հաջողութեամբ կառուցել արդյունաբերու-
թիւնն՝ առանց բուրժուազիայի և ընդդեմ բուրժուա-
զիայի, վոր նա կարող ե հաջողութեամբ, ղեկավարել
ամբողջ ժողովրդական տնտեսութիւնը՝ առանց բուր-
ժուազիայի և ընդդեմ բուրժուազիայի, վոր նա կարող
ե հաջողութեամբ սոցիալիզմ կառուցել՝ չնայած կապի-
տալիստական շրջապատմանը: Հին «թեորիան» աչն
մասին, թե ինչպեա վոր գլուխն ու մարմնի ալ մասե-

րը չեն կարող կառավարվել առանց ստամոքսի, աչնպեա
ել շահագործիչները չեն կարող կառավարվել առանց
շահագործողներէ, միմիայն հնազարի պատմութեան
հումնական հայտնի սենատոր Մենենիոս Ազրիպայի
սեփականութիւնը չե: Այդ «թեորիան» ներկայումս
հանդիսանում ե սոցիալ-դեմոկրատիայի քաղաքական
«փիլիսոփայութեան» անկյունաքարը՝ ընդհանրապեա,
իմպերիալիստական բուրժուազիայի հետ կռալիցիա
կազմելու՝ սոցիալ-դեմոկրատական քաղաքականութեան
անկյունաքարը՝ առանձնապեա: Այդ «թեորիան», վոր
ստացել ե նախապաշարմունքի բնույթ, կապիտալիս-
տական յերկիրներէ պրոլետարիատին հեղափոխակա-
նացնելու ճանապարհին ընկած ամենալուրջ արդելքնե-
րէց մեկն ե ներկայումս: Հոկտեմբերյան հեղափոխու-
թեան կարևորագույն հետեանքներէց մեկն աչն փաստն
ե, վոր նա ալ սուտ «թեորիային» մահացու հարված
հասցրեց:

Ել արդյոք պեաք կա՞ սպացուցելու, վոր Հոկտեմ-
բերյան հեղափոխութեան ալը և դրանց նման հետե-
փանքները չեյին կարող և չեն կարող մնալ առանց
լուրջ արդեցութեան կապիտալիստական յերկիրներէ
բանվոր դասակարգի հեղափոխական շարժման վրա:

Այնպիսի հանրածանոթ փաստեր, ինչպիսիներն են՝
կոմունիզմի առաջնութեաց շարժման ծախալումը կապի-
տալիստական յերկիրներում, ԽՍՀՄ-ի բանվոր դասա-
կալիստական յերկիրներում, վերջապեա, բանվորա-
կան պատվիրակութիւններէ հոսանքը դեպի Խորհուրդ-
ներէ յերկիրը՝ անտարակուսելիորեն խոսում են աչն

մասին, վոր Հոկտեմբերյան հեղափոխութեան պայմաններն արդեն սկսում են պտուղներ տալ:

2. Հոկտեմբերյան հեղափոխութեանը սասանեցրեց իմպերիալիզմը վոչ միայն նրա տիրապետութեան կենտրոններում, վոչ միայն «մետրոպոլիսներում»: Նա հարվածեց իմպերիալիզմի թիկունքներին ել, նրա պերիֆերիային ել՝ խարխելով իմպերիալիզմի տիրապետութեանը դադութային ու կախյալ յերկիրներում:

Հոկտեմբերյան հեղափոխութեանը, տապալելով կալվածատերերին ու կապիտալիստներին, փչրեց ազգային-դադութային ճնշման շղթաները և այդ ճնշումից ազատագրեց լայնատարած պետութեան առանց բացառութեան բոլոր ճնշված ժողովուրդներին: Պրոլետարիատը չի կարող ազատագրել իրեն՝ չազատագրելով ճնշված ժողովուրդներին: Հոկտեմբերյան հեղափոխութեան բնորոշ գիծն այն փաստն է, վոր նա իՍՂՄ-ի մեջ այդ ազգային-դադութային հեղափոխութեանները կենսագործեց վոչ թե ազգային թշնամութեան ու ազգամիջյան ընդհարումների դրոշի ներքո, այլ իՍՂՄ-ի ազգութեանների բանվորների ու դյուզացիների փոխադարձ վստահութեան ու յեզբայրտեան մերձեցման դրոշի ներքո, վոչ թե հանուն նացիոնալիզմի, այլ հանուն ինտերնացիոնալիզմի:

Հենց այն պատճառով, վոր ազգային-դադութային հեղափոխութեանները մեզանում կատարվեցին պրոլետարիատի ղեկավարութեամբ ու ինտերնացիոնալիզմի դրոշի ներքո, հենց այդ պատճառով էլ պարիս-ժողովուրդները, ստրուկ-ժողովուրդները, մարդկութեան պատմութեան մեջ առաջին անգամ բարձրացան իրոք վոր ազատ և իրոք վոր համասար ժողովուրդների

դրութեան՝ վարակելով իրենց որինսկով համայն աշխարհի ճնշված ժողովուրդներին:

Սա նշանակում է, վոր Հոկտեմբերյան հեղափոխութեանը նոր դարաշրջան է բաց արել, դարաշրջան գաղութային հեղափոխութեաններին, վորոնք կենսագործվում են աշխարհի ճնշված յերկիրներում պրոլետարիատի հետ դաշնակցած, պրոլետարիատի ղեկավարութեամբ:

Առաջներում «ընդունված էր» կարծել, թե աշխարհն սկզբից է վեր բաժանված է յեղել ստորին ու վերին ռասաների, սևերի ու սպիտակների, վորոնցից առաջիններն անընդունակ են քաղաքակրթութեան և դատապարտված են շահագործման առարկա լինելու, իսկ յեզբորդները հանդիսանում են քաղաքակրթութեան միակ կրողները, վորոնք կոչված են առաջիններին շահագործելու: Այժմ այդ առասպելը սկսեց և համարել ջանջախախտ ու դեն շարտված: Հոկտեմբերյան հեղափոխութեան կարևորագույն հետևանքներից մեկն այն փաստն է, վոր նա այդ առասպելին մահացու հարված հասցրեց՝ դործով ցույց տալով, վոր խորհրդային զարդացման հունը ներքաշված ազատագրված վոչ-յեզբայրտեան ժողովուրդներն ամենևին էլ այլևի պակաս ընդունակ չեն առաջ շարժելու իրոք առաջավոր կուլտուրան և իրոք առաջավոր քաղաքակրթութեանը, քան յեզբայրտեան ժողովուրդները:

Առաջներում «ընդունված էր» կարծել, թե ճնշված ժողովուրդների ազատագրման միակ մեթոդը բուրժուական նացիոնալիզմի մեթոդն է, ազդերը միմյանցից անջատվելու մեթոդը, նրանց միմյանցից բաժանելու մեթոդը, տարբեր ազդերի աշխատավորտեան

մասաների միջև ազդային թշնամութունն ուժեղացնելու մեթոդը: Այժմ այդ առասպելը պետք է համարել տառալիված: Հոկտեմբերյան հեղափոխության կարեւորագույն հետեանքներից մեկն այն փաստն է, վոր նա այդ առասպելին մահացու հարված հասցրեց՝ դործով ցույց տալով ճնշված ազգերի ազատագրման պրոլետարական, ինտերնացիոնալական մեթոդը՝ վորպէս միակ ձեռք մեթոդը՝ հնարավորութունն ու նպատակահարմարութունը, դործով ցույց տալով ամենատարբեր ժողովուրդների բանվորների ու դուռլայիների յեղբայրական դաշինքի հնարավորութունն ու նպատակահարմարութունը՝ հոժարակամութեան ու ինտերնացիոնալիզմի հիմունքներով: Այս բանի ուղղակի ապացույց չի կարող չծառայել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութունների Միութեան դոյութունը, Միութեան, վորը հանդիսանում է բոլոր յերկիրների աշխատավորների ապագա միավորման նախատիպարը համաշխարհային միասնական տնտեսութեան մեջ:

Ինչ խոսք, վոր Հոկտեմբերյան հեղափոխութեան այս և սրանց նման հետեանքները չեն ին կարող և չեն կարող մնալ առանց լուրջ ազդեցութուն ունենալու դուռլային ու կախյալ յերկիրների հեղափոխական շարժման վրա: Այս մասին են անկասկածելիորեն խոսում այնպիսի փաստեր, ինչպիսիներն են՝ ճնշված ժողովուրդների հեղափոխական շարժման աճումը Զինատանում, Ինդոնեզիայում, Հնդկաստանում և այլն և այս յերկիրների ժողովուրդների համակրանքի աճումը դեպի ԽՍՀՄ:

Գաղութների ու կախյալ յերկիրների անխռով շահագործման ու ճնշման դարաշրջանն անցավ:

Հասիլ ե ազատագրական հեղափոխութունների դարաշրջանը դադուրեցրեւ ու կախյալ յերկիրներում, այս յերկիրների պրոլետարիատի դարձնելու ժամ, հեղափոխութեան մեջ նրա հեղեմոնիայի դարաշրջանը:

Յ. Գեղիով հեղափոխութեան սերմերն ինչպէս իմպերիալիզմի կենտրոնները, այնպէս նաև նրա թիկունքները, թուրացնելով իմպերիալիզմի հզորութունը «մեղրուտարաններում» և սասանեցնելով նրա տիրապետութունը դադուրեցրեւ, — Հոկտեմբերյան հեղափոխութունը հենց սրանով հարցականի տակ և դրել ամբողջութեամբ վերցրած համաշխարհային կապիտալիզմի բուն իսկ դոյութունը:

Յեթե կապիտալիզմի տարերային դարգացումն իմպերիալիզմի պայմաններում, — այդ դարգացման անհամարաչափութեան պատճառով, կոնֆլիկտների ու պատերազմական ընդհարումների անխուսափելիութեան պատճառով, վերջապէս, իմպերիալիստական չտեսնված սպանդի պատճառով, — վերածել է կապիտալիզմի «նեխման» ու «մահացման» պրոցեսի, ապա Հոկտեմբերյան հեղափոխութունն ու նրա հետ կապված՝ հսկայական յերկրի պոկվելը կապիտալիզմի համաշխարհային սխտեմից չեն ին կարող չարագացնել այդ պրոցեսը, քայլ առ քայլ վողոգելով — սրբելով համաշխարհային իմպերիալիզմի բուն հիմունքները:

Դեռ ավելին: Հոկտեմբերյան հեղափոխութունը, սասանեցնելով իմպերիալիզմը՝ դրա հետ միասին հանձին պրոլետարական առաջին դիկտատուրայի ստեղծեց համաշխարհային հեղափոխական շարժման մի հզոր ու բացորոշ բազա, վորը նա առաջներում յերբեք չի

ունեցել և վորի վրա նա այժմ կարող ե հենվել: Հոկտեմբերյան հեղափոխությունն ստեղծեց համաշխարհային հեղափոխական շարժման այն հզոր ու բացարձակ կենտրոնը, վոր առաջնորդում յերբեք չի ունեցել այդ շարժումը և վորի շուրջը նա այժմ կարող ե համախորհրդակցել՝ կազմակերպելով բոլոր յերկիրների պրոլետարատները ու մնչված ժողովուրդների հեղափոխական միասնական նպատակները իմպերիալիզմի:

Սա ամենից առաջ նշանակում ե, վոր Հոկտեմբերյան հեղափոխությունը համաշխարհային կապիտալիզմին մահացու վերջ ե հասցրել, վորից նա ել յերբեք վոտքի չի կանգնի: Հենց այս պատճառով ել կապիտալիզմն այլևս յերբեք չի վերադարձնի իրեն այն «համասարակշուրթյունը» և այն «կայունությունը», վոր նա ուներ մինչև Հոկտեմբերը: Կապիտալիզմը կարող ե մասնակի կայունանալ, նա կարող ե ոսցրոնալացնել իր արտադրությունը, յերկրի կառավարչությունը հանձնել Փաշիզմին, ժամանակավորապես ճնշել բանվոր դասակարգին, բայց նա յերբեք չի վերադարձնի իրեն այն «անդորրությունն» ու այն «վստահությունը», այն «համասարակշուրթյունն» ու այն «կայունությունը», վորոնցով նա պճնամուրում եր առաջ, վորովհետև համաշխարհային կապիտալիզմի ճգնաժամը զարգացման մի այսպիսի աստիճանի յե հասել, յերբ հեղափոխության կրակներն անխուսափելիորեն պետք ե բռնկվեն մերթ իմպերիալիզմի կենտրոններում, մերթ պերիֆերիալում՝ ի չիք դարձնելով կապիտալիստական կարկատանները և օրեցօր մոտեցնելով կապիտալիզմի անկումը: Իսկ և իսկ ինչպես վոր հայտնի առակի մեջ ե. «պոչը

դուրս պրծացրեց՝ քիթը խրվեց, քիթը դուրս պրծացրեց՝ պոչը խրվեց»:

Յերկրորդ, սա նշանակում ե, վոր Հոկտեմբերյան հեղափոխությունը վորոշ բարձրության հասցրեց ամբողջ աշխարհի ճնշված դասակարգերի ուժն ու տեսակարար կշիռը, արիությունն ու մարտական պատրաստականությունը՝ հարկադրելով տիրապետող դասակարգերին, վոր հաշվի նստեն նրանց հետ, իբրև նոր, լուրջ գործոնի հետ: Այժմ աշխարհի աշխատավորական զանգվածներն այլևս չի կարելի դիտել վորպես մի «կույր ամբոխ», վորը խորխորում ե մթության մեջ և գուրկ ե հեռանկարներից, վորովհետև Հոկտեմբերյան հեղափոխությունը նրանց համար ստեղծեց մի վարոս, վորը լուսավորում ե նրանց ճանապարհը և հեռանկարներ ե տալիս: Յեթե առաջնորդում չկար մի համաշխարհային բաց Փորում, վորտեղից կարելի լիններ ցուցադրել և ձևավորել ճնշված դասակարգերի ակնկալություններն ու ձգտումները, ապա այժմ այդպիսի Փորում կա հանձին առաջին պրոլետարական դիկտատուրայի: Հազիվ թե կարելի յե կասկածել, վոր այդ Փորումի վոչնչացումն «առաջավոր յերկիրների» հասարակական-քաղաքական կյանքը յերկար ժամանակով կժամկեր անդուսպ սև ուսկիցիայի խավարով: Չի կարելի ժխտել այն, վոր «բուլշևիկյան պետության» դոյության սոսկական փաստն անդամ սանձահարում ե ուսկիցիայի սև ուժերը՝ հեշտացնելով ճնշված դասակարգերի պայքարն իրենց ազատագրման համար: Հատկապես սրանով ել բացատրվում ե այն անասնական ատելությունը, վոր բոլոր յերկիրների շահագոր-

ծողները տածում են դեպի բոլշևիկները: Կրկնվում է պատմութունը, թեև նոր հիմքով: Ինչպես վոր առաջ, Փետրվարի անկման ժամանակաշրջանում, «յակոբին» բառն եր բոլոր յերկիրների արխատկրատներին մեջ սարսափ ու դարչանք առաջացնում, այնպես ել այժմ, կապիտալիզմի անկման ժամանակաշրջանում, «բոլշևիկ» բառն է բուրժուական յերկիրներում սարսափ ու դարչանք առաջացնում: Յեվ, ընդհակառակը, ինչպես վոր առաջ Փարիզն եր հանդիսանում բարձրացող բուրժուազիայի հեղափոխական ներկայացուցիչներին համար պատասպարան ու դպրոց, այնպես ել այժմ Մոսկվան է հանդիսանում բարձրացող պրպետարիատի հեղափոխական ներկայացուցիչներին համար պատասպարան ու դպրոց: Յակոբիներին ատելը Փետրվարից չի րկեց կործանումից: Արդյոք կարելի՞ յե կասկածել, վոր բոլշևիկներին ատելը չի փրկելու կապիտալիզմին նրա անխուսափելի ջախջախումից:

Անցավ կապիտալիզմի «կայունության» դարաշրջանը՝ իր հետ տանելով բուրժուական կարգերի անհողողողության առասպելը:

Հասել է կապիտալիզմի կործանման դարաշրջանը:

4. Հոկտեմբերյան հեղափոխությունը միայն տնտեսական ու հասարակական-քաղաքական հարաբերությունների բնազավառում կատարված հեղափոխություն չէ: Նա միաժամանակ հեղափոխություն է բանվոր դասակարգի մտքերի մեջ, հեղափոխություն է նրա գաղափարախոսության մեջ: Հոկտեմբերյան հեղափոխությունը ծնվեց ու աճրապնդվեց մարքսիզմի դրոշի ներքո, սրբաբարիատի դիկտատուրայի գաղա-

փարի դրոշի ներքո, լենինիզմի դրոշի ներքո, լենինիզմի, վորն իմպերիալիզմի ու պրոլետարական հեղափոխությունների դարաշրջանի մարքսիզմն է: Նա այս պատճառով նշանավորում է մարքսիզմի հաղթությունն ընդդեմ ռեֆորմիզմի, լենինիզմի հաղթությունը՝ ընդդեմ սոցիալ-դեմոկրատիզմի, III Ինտերնացիոնալի հաղթությունը՝ ընդդեմ II Ինտերնացիոնալի:

Հոկտեմբերյան հեղափոխությունն անանցանելի ահոս քաշեց մարքսիզմի ու սոցիալ-դեմոկրատիզմի միջև, լենինիզմի քաղաքականության ու սոցիալ-դեմոկրատիզմի քաղաքականության միջև: Առաջներում, մինչև պրպետարիատի դիկտատուրայի հաղթությունը, սոցիալ-դեմոկրատիան կարող եր պճնամուկել մարքսիզմի դրոշով՝ բացօրոջ չժխտելով պրոլետարիատի դիկտատուրայի գաղափարը, բայց և վոչինչ, բացարձակապես վոչինչ չանելով այն բանի համար, վոր մոտեցնի այդ դուրս-փարի իրադրծումը, վորովհետև սոցիալ-դեմոկրատիան այն այսպիսի վարքադիծը վոչ մի սպառնալիք չեր ստեղծում կապիտալիզմի համար: Այն ժամանակ, այն շրջանում սոցիալ-դեմոկրատիան ձևականորեն ձուլվում եր կամ գրեթե ձուլվում եր մարքսիզմի հետ: Այժմ, պրպետարիատի դիկտատուրայի հաղթությունից հետո, յերբ բոլորն ակնբերներեն տեսան, թե դեպի ի՞նչ է տանում մարքսիզմը, և թե ի՞նչ կարող է նշանակել նրա հաղթությունը, սոցիալ-դեմոկրատիան այլևս չեր կարող պճնամուկել մարքսիզմի դրոշով, չեր կարող կոկեսություն անել պրոլետարիատի դիկտատուրայի գաղափարի հետ՝ առանց վորոջ վտանգ ստեղծելու կապիտալիզմի համար: Սոցիալ-դեմոկրատիան, վաղուց խզելով

կապը մարքսիզմի վողու հետ, հարկադրված յեղափոխապես խզելու մարքսիզմի դրոշի հետ ել, բացորոշ ու անհրժեշտ կերպով կանգնեց մարքսիզմի դավալի դեմ, Հոկտեմբերյան հեղափոխութեան դեմ, պրոլետարիատի՝ աշխարհումս առաջին դիկտատուրայի դեմ: Այժմ սոցիալ-դեմոկրատիան պետք է սահմանաձրվեր, և իրոք սահմանաձրվեց մարքսիզմից, վորովհետև ներկա պայմաններում չի կարելի իրեն մարքսիստ անվանել՝ բացորոշ և անձնավորաբար չպաշտպանելով աշխարհի առաջին պրոլետարական դիկտատուրան, հեղափոխական պայքար չմղելով իր բուրժուազիայի դեմ, պայմաններ չստեղծելով պրոլետարիատի դիկտատուրայի հաղթութեան համար իր սեփական յերկրում: Սոցիալ-դեմոկրատիայի և մարքսիզմի միջև անդունդ է բացվել: Այսուհետև մարքսիզմի միակ կրողն ու պատվաբը լենինիզմը, կոմունիզմն է:

Բայց բանը սրանով չսահմանափակվեց: Հոկտեմբերյան հեղափոխութեանը, սահմանաձրելով սոցիալ-դեմոկրատիային մարքսիզմից, ավելի սուսջ դնաց՝ սոցիալ-դեմոկրատիային չպրտելով աշխարհի առաջին պրոլետարական դիկտատուրայի դեմ կապիտալիզմն ուղղակի պաշտպանողների բանակը: Յերբ պ. պ. Աբլեքներն ու Բատկերները, Վելսերն ու Լեվինները, Լոնգեններն ու Բլյումները պարսպով են «խորհրդային ուժի մը», դովաբանելով պառլամենտական դեմոկրատիան», ապա դրանով նրանք ուզում են ասել, թե իրենք պայքարում են և պետք է պայքարեն կապիտալիստական կարգերը ԽՍՀՄ-ում վերականգնելու համար, կապիտալիստական ստրկութեանը «քաղաքակիրթ» պե-

տութեաններում պահելու համար: Այժմյան սոցիալ-դեմոկրատիզմը կապիտալիզմի գաղափարային հեռաբանն է: Լենինը հազար անգամ իրավացի յեր, յերբ ասում էր, թե սոցիալ-դեմոկրատական այժմյան քաղաքագետները «բուրժուազիայի իսկական գործակալներն են բանվորական շարժման մեջ, կապիտալիստներն են», թե «պրոլետարիատի քաղաքացիական պատերազմում ընդդեմ բուրժուազիայի» նրանք անխուսափելիորեն կկանգնեն «վերսակցիներ ի կողմն ընդդեմ կոմունարների»: Անհնարին է վերջ տալ կապիտալիզմին՝ առանց վերջ տալու սոցիալ-դեմոկրատիզմին քանվորական շարժման մեջ: Այս պատճառով՝ կապիտալիզմի մահացման դարազրուխը սրա հետ միասին հանդիսանում է սոցիալ-դեմոկրատիզմի մահացման դարազրուխը բանվորական շարժման մեջ: Հոկտեմբերյան հեղափոխութեան մեծ նշանակութեանը, ի միջի այլոց, այն է, վոր նա իրենով նշանավորում է լենինիզմի անխուսափելի հաղթանակն ընդդեմ սոցիալ-դեմոկրատիզմի՝ համաշխարհային բանվորական շարժման մեջ:

Վերջացել է II Ինտերնացիոնալի ու սոցիալ-դեմոկրատիզմի տիրապետութեան դարաշրջանը բանվորական շարժման մեջ:
Հասել է լենինիզմի ու III Ինտերնացիոնալի տիրապետութեան դարազրուխը:

«Գրավո» № 255,
Յ-7 նոյեմբերի 1927 թ.

Տպագրվում է ըստ «Լենինիզմի հարցերը» գրքի 255-266 էջերի տեքստի, ՀայկաՍՍՀ, 1935 թ.



Հոկտեմբերյան հեղափոխությունը և սուսական կոմունիստների տակտիկան (Հոկտեմբերի ուղինը ըստ գրքի առաջաբանը)	5
I. Հոկտեմբերյան հեղափոխության արագըին ու ներքին պայմանները	7
II. Հոկտեմբերյան հեղափոխության յերկու առանձնահատկությունների մասին, կամ Հոկտեմբերը և ընկ. Տրոցկու պերմանենտ հեղափոխության թեորիան	12
III. Բոլշևիկների տակտիկայի միջանի առանձնահատկությունների մասին Հոկտեմբերի նախապատրաստման ժամանակաշրջանում	36
IV. Հոկտեմբերյան հեղափոխությունը վորպես համաշխարհային հեղափոխության սկիզբ և նախադրյալ	56
Հոկտեմբերյան հեղափոխության միջազգային բնույթը (Հոկտեմբերի տասնամյակի առթիվ)	65

Քարգմ. Արշ. Խոնդկարյան, խմբ. Նշ. Մակինց
Կոնստ. սրբ. Յե. Յ.-Միևսյան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան, սրբագրիչ Ա. Տ.-Մկրտչյան

Գլավիխտի լիագր 1103—A, հրատ. № 407,

Պատվեր 322, տիրաժ 10,000, ինդեքս ^{ՌՍ}_{Հ II}

Հանձնված է արտադրության 21/XI 1936 թ.

Ստորագրված է սպագրության 22/XII, 1936 թ.

Գինը 40 կ., կազմը 30 կ.

«Ազգային գրադարան»



NL0174910

ԳԻՆԸ 70 Կ.



И. СТАЛИН

**ОКтябрьская РЕВОЛЮЦИЯ
И ТАКТИКА
РУССКИХ КОММУНИСТОВ**

Армпартиздат, Ереван, 1936 г.